

### ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՈՒԺԵՐ ՆԵՐԽՈՒԺԵՑԻՆ ՌԱՍԱԼԼԱ

Երէկ գիշեր մօտաւորապէս 40 ճիւղերով եւ բազմաթիւ սրահապատներով իսրայէլեան բանակը ներխուժեց Այսրլորդանանի Ռամալլա քաղաքը եւ պաշարեց «Ապտէլ Նասէր» մզկիթը: Իսրայէլեան բանակի բանբերը պաշտօնապէս հաստատեց լուրը, սակայն ըստ, որ չի կրնար ճշգրիտ բնույթով թէ «սահաբեկիչներու դէմ միջոցառումներ պիտի որդեգրուի» կամ ոչ: Նշենք, որ պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆաթի կեղծոնատեղին կը գտնուի Ռամալլա եւ անիկա վերջերս միշտ ալ իսրայէլեան ներխուժումի վտանգին մէջ կը գտնուի: Բազմաթիւ առիթներով, Թէլ Աւի յայտարարած է Արաֆաթը երկրէն արտաքսելու իր պիտոյնը...

2004ի ՊԵՏԱԿԱՆ ՊԻՏՏՃԷԻ ՆԱԽԱԳԻԾԻ ԸՆՆԱՐԿՄԱՆ ՅԱՏՈՒԿ

### ՆԱԽԱՐԱՐԱՅ ԽՈՐՀՈՒՐԳԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԺՈՂՈՎԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ ԱՅՍՕՐ

Նախարարաց խորհուրդը Թանգարանի շրջանի իր կեդրոնատեղիին մէջ երէկ գումարեց արտակարգ ժողով մը, որուն ընթացքին քննարկեց 2004ի պետական պիտոյնի նախագիծը:

Ժողովին նախագահեց նախագահ գործադիր Լահուտ, ներկայութեամբ վարչապետ Ռաֆիք Հարիրիի: Ժողովին բացակայեցան փոխ վարչապետ Իսամ Ֆարէս եւ Հանրօգուտ շինութեանց ու փոխադրութեան հարցերու նախարար Նեփիա Միքայիլ:

Նիստին ընթացքին ելեւմուտքի նախարար Ֆուատ Մինիորա ներկայացուց նախագիծը, ինչպէս նաեւ ժողովին պարզուեցան նախագահ Լահուտի ցուցմունքները նախագիծին գծով: Ապա սկսան խորհրդակցութիւնները, որոնք ժողովի աւարտին տեղեկատուութեան նախարար Միշէլ Սըմանայի կողմէ որակուեցան «գործակցութեան միջոցով խորհրդակցութիւններ»:

Նիստը աւարտեցաւ երեկոյեան ժամը 8:30ին: Այսօր ժողովը պիտի շարունակուի երկու նիստերով:

### ՖՐԱՆՍԱՅԻ ԳԵՐՄԱՆԻՈՅ ԵՒ ԲՐԻՏԱՆԻՈՅ ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԻԳԵՐՈՒՆ ԸՆՈՐԸԻՒ

### ԻՐԱՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ ԽՈՍՏԱՑԱՒ ՄԱԿԻ ԿՈՐԻՉԱՅԻՆ ՈՒԺԱՆԻԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՇԵՏ

Իրան երէկ տեղի տուաւ միջազգային պահանջներուն դիմաց, փաստելու համար, որ կորիպային Գործակալութեան հետ: Երեք երկիրներուն արտաքին գործոց նա-

բողջական գործակալութիւն» խոստացաւ ՄԱԿի կորիպային Ումաց, փաստելու համար, որ կորիպային Գործակալութեան հետ: Երեք երկիրներուն արտաքին գործոց նա-

խարարները անմիջապէս ողջունած են դիւանագիտական իրենց անսխալընթաց ճիւղին արդիւնքը, յայն դէպի յառաջ կարելու քայլ մը նկատելով, ինչ կը վերաբերի թափ ստացող լարուածութիւնը փարատելու հարցին:

### ՆԱԽԱԳԱՀ ԱՍԱՏ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԷ ԻՍՐԱՅԷԼԻ ՅԵՂԱՊԱՇՏԱԿԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ



Իսլամ Բարլոս եւ Պաշտար Ասատ

ԴԱՄԱՍԿՈՍ, 21 (ԱՅՓ).- Սուրիոյ նախագահ Պաշտար Ասատ յայտարարեց, որ Միջին Արեւելքի խաղաղութիւնը ամէն ժամանակէ աւելի հեռու ու անհասանելի է:

Ասատ, որ կը խօսէր Սպանիոյ Խուան Բարլոս թագաւորին հետ հանդիպումի մը ընթացքին, դատապարտեց Իսրայէլի ցեղապաշտական ու խտրականութեան քաղաքականութիւնը պաղեստինցիներուն եւ արաբներուն դէմ: Ասատ վերստին շեշտեց, որ իր երկիրը կը հետապնդէ շրջանին մէջ արդար ու ամբողջական խաղաղութեան հաստատումը, որ հիմնուած է ՄԱԿի որոշումներուն վրայ, որոնք կը պահանջեն, որ Իսրայէլը հեռանայ պաղեստինեան գրասեղանէն: Սուրիացի նախագահը դիտելով տուաւ նաեւ, որ Իսրայէլի կառավարութիւնը փոխանակ խաղաղութեան ճամբուն վրայ յառաջխաղացք արձանագրելու, թափ տուած է պաղեստինցի ժողովուրդին հայածանքին՝ ուժեղացնելով անոնց բնակարանները ու սպանելով քաղաքայինները: Ասատ խիստ ռոճով դատապարտեց նաեւ Այսրլորդանանի շուրջ Իսրայէլի արպիտութեան համար կառուցուող պատը, որ հրէական պետութեան կը կցէ պաղեստինեան հողեր:

Ասատ խօսեցաւ նաեւ Իրաքի մէջ տիրող կացութեան մասին, մաղթելով որ մօտ օրէն կայունութիւնը հաստատուի: Ան ըստ, որ Իրաքի ժողովուրդը պէտք է ընտրէ իր կառավարութիւնը, ինչպէս նաեւ ՄԱԿ պէտք է կարելու ու բանալի դերակատարութիւն ունենայ՝ օժանդակելու համար Իրաքի կառուցմանը, որպէսզի յաղթահարեն պատերազմի պատճառած դժուարութիւնները: Աստուամ Հիւսէյնի տապալումէն ի վեր, Ուաշինկթըն աշխատանք կը տանի ու ճնշում կը բանեցնէ, որպէսզի Սուրիա դերակատարութիւն չունենայ յետպատերազմեան Իրաքի մէջ:

Նախագահ Ասատ յոյս յայտնեց նաեւ, որ Սուրիա շուտով ստորագրէ Եւրոպական Միութեան հետ ընկերակցութեան համաձայնագիրը: Խուան Բարլոս թագաւորը իր կարգին ըստ, որ Սուրիա կարելու դերակատարութիւն ունի Միջին Արեւելքի մէջ:

### ՂԱՍՍԱՆ ՂԱՇԸՆ ԿՈՉ ԿՊԻՂԵ ԲՈՂՈՐ ԱՇԽԱՏԱԿՈՐՆԵՐՈՒՆ՝ ՄԱՍՆԱԿՑԻԼ ԿԱՂՈՒԱՆ ԳՈՐԾԱԴՈՒԼԻՆ ԵՒ ՑՈՅՑԻՆ

Աշխատանքային Ընդհանուր Համադաշնակցութեան նախագահ Ղասսան Ղարն երէկ կոչ ուղղեց բոլոր աշխատանքներուն՝ մասնակցելու վաղը՝ Հինգշաբթի օրուան ընդհանուր գործադուլին եւ ցոյցին, որ պիտի սկսի կէսօրէ առաջ ժամը 11:00ին՝ Պարպիւրի հրապարակէն եւ պիտի հասնի Թանգարանի շրջան՝ կառավարութեան կեդրոնատեղիին առջեւ:

Ղարն երէկ տուաւ մամուլի ասուլիս մը, որուն ընթացքին շեշտեց, որ աշխատանքները պիտի մնան մնայուն «շարժումի» մէջ, որպէսզի ամէն գնով գործադուլին սենսուրայական պահանջները: Ան աւելցուց, որ նախագահի աշխատանքները եւս կը պարակցին գործադուլին եւ շեշտեց, որ նախագահի աշխատանքները պիտի դանդաղեցնէ իր աշխատանքը եւ պիտի մասնակցի որոշուած ցոյցին:

«ՓԱՐԻԶ-2»Ի ԳԾՈՎ

### ՓՈՐԹՄԷՆ ԶԱՐՄԱՆՔ ԿԸ ՅԱՅՏԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐԱԾ «ՅԱՊԱՂՈՒՄ»ԻՆ ՀԱՄԱՐ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ Քորայթէմի մէջ ընդունեց Միջին Արեւելքի եւ Հիւսիսային Աֆրիկէի մէջ Միջազգային Դրամատան նախագահ Քրիստիան Փորթմէնը, ներկայութեամբ ելեւմուտքի նախարար Ֆուատ Մինիորայի եւ տնտեսութեան եւ առեւտուրի նախարար Մարուան Համատէի:

Հանդիպումին ընթացքին Փորթմէնը գարմանք յայտնեց, թէ Լիբանան յապաղում արձանագրած է «Փարիզ-2» վեհաժողովի պայմաններու գործադրութեան մէջ: Փորթմէնը շեշտեց, որ միջազգային ընտանիքն ու հաստատութիւնները հարկ եղած օժանդակութիւնները տրամադրած են Լիբանանի վերականգնելու համար իր տնտեսութիւնը եւ փրկելու զայն հաւանական լուրջ սպառնալիքներէ:

Մէկուկէս ժամուան հանդիպումէն ետք Փորթմէնը կատարեց յայտարարութիւններ, որոնց մէջ նշեց, որ Լիբանանի համար «Փարիզ-2» վեհաժողովով տրամադրուած օժանդակութիւնները կարելու են ու հանրապետութեան հողերը երկիրները նման առիթներ չունեցան եւ ոչ ալ նման օժանդակութիւններ ստացան:

### ՀԱՄԱՍ ԿՆԵՐԴՆՈՒ ԱՆ ՊԱՏԱՍԽԱՆ ԶԶԳԵԼ ԿԱԶՄԱՅԻ ՎՐԱՅ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՅԱՐՁԱԿՈՒՄԸ

Պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆաթ կոչ ուղղեց միջազգային ընտանիքին՝ կասեցնելու Իսրայէլի «գիտաբանական խեղճութիւնը»: Միջ յայտարարելու պաղեստինցիները Կազախի մէջ կը մասնակցեցին յուղարկատնտեսական տարազգիներու, որոնք ինկած էին իսրայէլեան քանի մը յարձակումներուն ընթացքին:

Արաֆաթ, որ կը խօսէր Ռամալլայի մէջ, ըստ, որ միջազգային ընտանիքին եւ խաղաղութեան քառուստային պարտականութիւնն է վերջ տալ այս յիմարուրեան, որուն ճամբով Իսրայէլ կ'ուզէ կործանել պաղեստինեան հողերը եւ անոնց ժողովուրդը:

Կազախի դէմ երկուշաբթի օրուան յարձակումները խլած էին տասը զոհ եւ աւելի քան 70 վիրաւոր: Պա-

իր կարգին, Գերմանիոյ արտաքին գործոց նախարար Եոշթա Ֆիշլը ըսած է, որ համաձայնութիւնը օգտակար պիտի ըլլայ «ընթացք կայունացնելու համար»: Իսկ Այսրլորդանանի արտաքին գործակալ Միշէլ Սթար, որ 2 տարուան մէջ 5րդ անգամ ըլլալով Թեհրան կ'այցելէր, ըսած է, որ համաձայնութիւնը «դէպի յառաջ կարելու քայլ մըն է»:

Միացեալ հաղորդագրութեան մը մէջ, Իրան խոստացած է ՄԱԿի գործակալութեան «ամբողջական թափանցիկութիւն» ցուցաբերել, վերահաստատած է կորիպային պետութեան արձանագրութիւնը եւ ընդգծած, որ կորիպային պետութեան «վարչապետութեան» մէջ տեղ չունին:

Շարք՝ Էջ 10

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ ՕՐԵՆՔԻ ՈՒԺ ԿՈՒ ՏԱՅ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐԱՐԵԿՉՈՒԹԵԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻՆ

Երէկ Հայաստանի Ազգային ժողովին մէջ ներկայացուեցաւ «Միջազգային աշխատանքներու դէմ պայքարի մասին» օրէնքի նախագիծը: Օրէնքի հեղինակներն են՝ Հ. Յ. Ազգային ժողովի խմբակցութեան քարտուղար ընկ. Հրայր Կարապետեան կարեւոր նկատեց այն հանգամանքը, որ այս օրէնքին ընդունումը անհրաժեշտ է, որպէսզի հնարաւոր դառնայ «կանխել ահաբեկչութիւնը եւ ոչ թէ անոր պատահելէն ետք դարձանել հետեւանքները»:

Այս օրէնքով կը սահմանուի, թէ ի՞նչ է ահաբեկչութիւնը իրեն յանցագործութիւն, ինչպէս նաեւ կ'առաջարկուի հիմնել մարմին մը, որ լիազօրուած կ'ըլլայ համակարգելու ահաբեկչութեան դէմ պայքարի կոչուած մարմիններու աշխատանքը:

Ազգային ժողովի փոխ նախագահ Հ. Յ. Բիւրոյի անդամ ընկ. Վահան Յովհաննիսեան իր կարգին կարեւորեց ահաբեկչութիւն եզրին յատակացումը: «Ահաբեկչութիւն կրնան անուանուիլ այն գործողութիւնները, որոնք թիրախ կը դառնան քաղաքացիներ, քաղաքական գործիչներ, պատանդներ, իսկ զինուած ուժերու դէմ պայքարը չի կրնար ահաբեկչութիւն նկատուիլ», ընդգծեց Վահան Յովհաննիսեան:

### ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

### ԵԱՀԿԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՏԵՍԱԿՑԵՑԱՒ ՔՈՉԱՐԵԱՆԻ ՀԵՏ

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան երէկ ընդունեց Եւրոպայի Անվտանգութեան եւ Համագործակցութեան Կազմակերպութեան (ԵԱՀԿ) գործող նախագահ, Հոլանտայի արտաքին գործոց նախարար Եասի Տէ Հուփ Ենֆրիքի գլխաւորած պատուիրակութիւնը:

Հանդիպման ընթացքին Հոլանտացի պաշտօնատարը նշած է, թէ իր շրջանակներէն կարեւոր կը նկատուի կարգի ծնօթեցնել իրադիմական, տարբեր խնդիրներու շուրջ կողմերու մօտեցումներուն, ինչպէս նաեւ քննարկել Լեռնային Ղարաբաղի տագնապի վերջին գորգացումները եւ լուծման հեռանկարները:

Ենֆրիքի նշած է, թէ Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծումը կը մնայ ԵԱՀԿ գործունէութեան կարեւորագոյն ուղղութիւններէն մէկը: Ան յոյս յայտնած է, որ բանակցային գործընթացը կը վերսկսի եւ ԵԱՀԿի արակցութեամբ բոլոր կողմերուն համար ընդունելի լուծում մը կը գտնուի:

Նախագահ Ռոպէրթ Քոչարեան վերահաստատեց Հայաստանի վեհապետութիւնն ու Հետեւողականութիւնը տագնապին խաղաղ լուծման մէջ:

Կողմերը անդրադարձան նաեւ ԵԱՀԿի հետ Հայաստանի գործակցութեան եւ շրջանակին խնդիրներու: Ենֆրիքի երեւանի մէջ տուած մամուլի ասուլիսի մը, որուն ընթացքին յայտարարեց, թէ ԵԱՀԿի Միջնաբեր խմբակի նախագահները շուտով պիտի ներկայացնեն Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման նոր առաջարկներ: Ան նշեց, որ այս խնդիրը նաեւ պիտի քննարկէ Ազգայնական խորհուրդի նախագահ Իլհամ Ալիեւի հետ եւ պիտի յայտնէ, թէ Եւրոպական Միութիւնը, ԵԱՀԿ եւ Եւրոպական խորհուրդը կը ձգտեն ստեղծել տագնապին վերջնական լուծումը:

ԵԱՀԿի նախագահը երեւանէն մեկնեցաւ Թիֆլիս, ուր պիտի տեսակցի նախագահ Էտուարտ Շեւարտնանձեի հետ, ապա պիտի ուղղուի Ազգայնական:

### ՀԱՐԱԻԱՅԻՆ ԿՈՎ ԿԱՍԵԱՆ ՀԱՐՑԵՐՈՒ ԳԾՈՎ Ե. ՄԻՈՒԹԵԱՆ ՅԱՏՈՒԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան երէկ ընդունեց Հարաւային Կովկասեան հարցերու գծով Եւրոպական Միութեան յատուկ ներկայացուցիչ Հէյկի Տալվիթիէի գլխաւորած պատուիրակութիւնը:

Նշելով, որ Եւրոպական Միութիւնը շահագրգռուած է Հարաւային Կովկասի երկիրներու հետ յարաբերութիւններու զարգացմամբ, Տալվիթիէն նախագահ Քոչարեանի ներկայացուցիչ Միութեան մօտեցումները շրջանի երկիրներուն նախագահ Քոչարեանի Պրիւքսէլ այցելութեան ընթացքին Եւրոպական Միութեան բարձրագոյն ղեկավարութեան հետ պիտի քննարկուին Հայաստանի եւ սոյն կազմակերպութեան միջեւ համագործակցութեան խորացման եւ ընդլայնման վերաբերող հարցեր:

Կողմերը անդրադարձան նաեւ Հայաստանի մէջ կատարուող բարեփոխումներուն, մարդկային իրաւանց պաշտպան հիմնարկի ձեւաւորման առնչուող հարցերուն: Անոնք խօսեցան նաեւ Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման գործընթացին եւ հայ-թրքական յարաբերութիւններուն առնչուող խնդիրներու շուրջ:

### ԸՆԴՈՒՄ՝ Ա. ՂՈՒԿԱՍԵԱՆԻ ՀԵՏ

Եւրոպական Միութեան յատուկ ներկայացուցիչ Հէյկի Տալվիթիէ եւ արտ գլխաւորած պատուիրակութիւնը երէկ հանդիպում ունեցան նաեւ Լեռնային Ղարաբաղի նախագահ Արկարի Ղուկասեանի հետ, որ աշխատանքային այցելութեամբ կը գտնուէր Երեւան: Քննարկուեցան Հարաւային Կովկասի երկիրներու հետ Եւրոպական Միութեան յարաբերութիւններուն վերաբերող հարցեր: Կողմերը արձարծեցին Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման Եւրոպական Միութեան հաւանական աշխատանքները:

Հանդիպումին մասնակցեցան նաեւ Լեռնային Ղարաբաղի արտաքին գործոց նախարար եւ Հայաստանի մէջ Լեռնային Ղարաբաղի մշտական ներկայացուցիչը:

### ՊԵԹԸԼ ԱՅՑԵԼԵՑ ՀԱՐԻՐԻԻ, ՍԱԿԱՅՆ ՈՉ ՄԵԿ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԵՑ



Երէկ յետմիջօրէին, վարչապետ Ռաֆիք Հարիրի ընդունեց Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Վինսենթ Պեթլը, որուն հետ քննարկեց ընդհանուր հարցեր, ինչպէս նաեւ շրջանային իրադարձութիւնները:

### ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՎԵՐԸՆՏՐԵՑ ԻՐ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐԸ՝ ԿԱՐԳ ՍԸ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ

Խորհրդարանը երէկ վերընտրեց իր յանձնախումբերը, կարգ մը փոփոխութիւններ կատարելով և ստեղծելով յատուկ յանձնախումբ մը արհեստագիտութեան մարպիւն վերաբերեալ: Յանձնախումբին նախագահն է երեսփոխան Ղիսուա ժալլալ: Յանձնախումբը կը բաղկանայ 9 անդամներ:

Ժողովին նախագահեց խորհրդարանի նախագահ Նեպիի Պրրի, ներկայութեամբ վարչապետ Ռաֆիք Հարիրի և մեծ թիւով նախարարներու և երեսփոխաններու:

Նշեալ նիստին փոփոխութեան ենթարկուեցաւ ներքին կանոնադրի թիւ 73, 135, 136 և 21 յօդուածները, որոնց հիմամբ՝ խորհրդարանին մէջ հարցաքննութեան կամ հաշուետուութեան նպատակով կատարուած խօսքերուն տեսողութիւնը կրճատուեցաւ և սահմանուեցաւ 15 վայրկեան կառավարութեան և 5 վայրկեան երեսփոխաններուն:

Խօսքի տեսողութեան կրճատումին դէմ բողոքեցին խորհրդարանի նախկին նախագահ Հիւսէյն Հիւսէյնի և երեսփոխաններ Սիբրլա Ֆարթուշ, Նատեր Սուքքար, Ռուպեր Դանէմ և Սելիմ Սաստէ:

## ՆԱԽԱԳԱԸ ԼԱՇՈՒՏ ՄՏԱԴՐԱԾ Է ԿԵՐՏԵԼ ԶՕՐԱԴՈՐ ՊԵՏՈՒԹԻՒՆ ՍԸ

Նախագահ Վոր. Էմիլ Լահուտ երէկ հաստատեց, որ մտադրած է կերտել Վորաւոր պետութիւն մը, որ Լիբանանի քաղաքացիներուն կը վերադարձնէ իրենց իսկ երկրին հանդէպ յարգանքի պատգամը: Ան աւելցուց, որ այս գործընթացը կը պահանջէ ազգային գիտակցութիւն, հեռու՝ անանական շահերէ:

Նախագահ Լահուտ այս յայտարարութիւնները կատարեց Միացեալ Նահանգներու համալսարաններէն շրջանաւարտներու մէկ պատուիրակութիւնը ընդունած պահուն: Պատուիրակութիւնը կը գլխաւորէր տոքթ. Սամի Ռայշունի:

Նախագահ Լահուտ հանդիպում մը ունեցաւ նախկին նախարար Ֆուատ Պուրթուհի հետ, որուն հետ քննարկեց ներլիբանանեան հարցեր, յատկապէս տնտեսական, ինչպէս նաեւ քննարկեց շրջանային իրադարձութիւնները:

Նախագահ Լահուտի այցելեց նաեւ մարոնիներու ընդհանուր խորհուրդի մէկ պատուիրակութիւնը, նախագահութեամբ Ռեմոն Ռուֆայէլի, որ ըսաւ, թէ խորհուրդին կողմէ նախագահ Լահուտի ներկայացում է հրաւեր մը՝ մասնակցելու 18 Նոյեմբերին «Պրիսթոլ» պանդոկին մէջ կայանալիք խորհուրդի տարեկան անհրաժեշտ ընթացիկին:

Նախագահական պալատ այցելեցին նաեւ երեսփոխան Մոհամէտ Սաֆատի, պետական անվտանգութեան ընդհանուր տնօրէն Վոր. Էտուար Մանսուր և էլեկտրականութեան ընկերութեան ընդհանուր տնօրէն Քամալ Հայէք:

Միւս կողմէ, նախագահ Լահուտ երէկ շնորհաւորական հեռագիր մը յղեց Յովհաննէս-Պօղոս Բ. պապին՝ անոր գահակալութեան 25ամեակին առիթով: Ան շեշտեց, որ Լիբանան շնորհակալ է պապին ցուցաբերած վարակցութեան և հոգատարութեան համար:

### ՆԱԽԱԳԱԸ ԼԱՇՈՒՏԻ ՀՈՎԱՆԱԲՈՐՈՒԹԵԱՄ

## «ՃԵՆԻՍԻԱ»Ի ՄԷՋ ԲԱՅՈՒՅՑԱԻ ՄԱԿԻ ՄԷՋ ԱՐԱՔ ՆԱԽԿԻՆ ԴԵՍՊՈՒՆՆԵՐՈՒ ԱՌԱՋԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ

Նախագահ Վոր. Էմիլ Լահուտի ներկայացուցիչ՝ արտաքին գործոց նախարար Ժան Օպէյտ երէկ առաւօտեան ժամը 10:00ին «Ճենիսիա» պանդոկին մէջ բացուեց կատարեց նախագահ Վոր. Էմիլ Լահուտի հովանաւորութեամբ տեղի ունեցող ՄԱԿԻ մէջ արաք նախկին դեսպաններու միջազգային միութեան առաջին խորհրդածոլովը:

Նախագահ Վոր. Էմիլ Լահուտի ներկայացուցիչ՝ արտաքին գործոց նախարար Ժան Օպէյտ երէկ առաւօտեան ժամը 10:00ին «Ճենիսիա» պանդոկին մէջ բացուեց կատարեց նախագահ Վոր. Էմիլ Լահուտի հովանաւորութեամբ տեղի ունեցող ՄԱԿԻ մէջ արաք նախկին դեսպաններու միջազգային միութեան առաջին խորհրդածոլովը:

Նախագահ Լահուտ իր խօսքին մէջ ընդգրծած էր նաեւ, որ Լիբանան կը շարունակէ պահպանել ՄԱԿԻ Ապահովութեան Խորհուրդի որոշումներուն և կարեւոր կը նկատէ անոր դերակատարութիւնը պահպանելու համար միջազգային ապահովութիւնն ու խաղաղութիւնը:

### Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ

Կիրակի, 26 Հոկտեմբեր 2003, Գիւտ Խաչի Կիրակին՝ եկեղեցւոյ անուանակոչութեան տօնն է: Այն հաւատացեալները, որոնք կը փափաքին մատուցուող ոչխար մուրիքի և կամ մասնակից դառնալ միթական մուրիքով, թող բարի ըլլան կապ պահել թաղականութեան գրասենեակը: Ընդ. 01 / 981102/3 թիւին, ամէն օր առաւօտեան ժամը 8:00էն մինչեւ կեսօրը ետք ժամը 1:00:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴ Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ

**REQUIRED**  
Required secretary and assistant managing director, dynamic, with university degree, good knowledge of english and french. Minimum 3 years experience with computer skills (Windows, Word, Excel, Internet). Good conditions. Send CV by fax (1) 480133.

### ՄԱՀԱՉԴ

Տիր Յարութիւն Առաքելեան (Ագիւրեան) Տէր և տիկին Արգար և Սիլվի Առաքելեան (Ագիւրեան) և զաւակները՝ Գարիլ, Կասիա և Յարութ Տէր և տիկին Վահէ և Զեփիւռ Գայտէրեան և զուստրը՝ Սալբի

Խրիմեան ընտանիք  
Զէրքէզեան ընտանիք  
Գուլումեան ընտանիք  
Թուխմանեան ընտանիք  
Մուրատեան ընտանիք  
Քէօրօղեան ընտանիք  
և համայն ազգականներ կը գուժեն իրենց կնոջ, մօր, մեծ մօր, աներմօր և հարազատին՝

### ՎԵՐԺԻՆ ԱՌԱՔԵԼԵԱՆԻ (ԱԳԻԼԵԱՆ) (ՕՏԵԱԿ՝ ԽՐԻՄԵԱՆ)

մահը, որ պատահեցաւ Շարաթ, 18 Հոկտեմբեր 2003, կէսօրէ ետք ժամը 3:00ին, իր բնակարանին մէջ, յետ կարճատե հիւանդութեան:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Երկուշաբթի, 20 Հոկտեմբեր, կէսօրէ առաջ ժամը 11:30ին, Նոր Մարտի Սրբոց Բառասանից Մանկանց եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

● Ներկայ ընդունելի իբրեւ մահագոյ:  
● Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը՝ Նիւ Ռուտա, Նաճարեան շէնք, 2րդ յարկ, Երեքշաբթի 21 և Զորեքշաբթի 23 Հոկտեմբերին:  
● Կը խնդրուի փոխան ծաղկեպսակի և իրատուութիւններ կատարել Լիբանանի Օգնութեան Խաչի կամ ձեմարանի Սանիթու ֆոնդին:

### ՎԱՐՉՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ

● Տեղաբաշտի (ճախկին Սի. Էմ. Սի.ի մօտ), 2 մնջասենեակ, հիւրարար և յարակից մասեր, գեղատեսիլ դիրք, 3րդ յարկ, ամսական 250\$: Դիմել հեռ. 03-821061 (մեր Ասատ Աբայա):

### ԿՈՒՉՈՒԻ

● Semerjian Optic կարիք ունի վաճառող օրինորդի մը, մերկայանալ անձամբ, երեկոյեան ժամը 7:00էն 8:00ը, Պուրճ Համուտ, Զաղաքապետարանին մօտ:

### ԿՈՒՉՈՒԻ

● Պաշտօնեայ մը՝ յետմիջօրեի աշխատանքի համար: Դիմել հեռ. 03-782323:

### ԿՈՒՉՈՒԻ

● Հաստատութիւն մը կարիք ունի ինքնաշարժի վարորդի մը, ապրանք փոխադրելու և տեղադրելու համար: Դիմել հեռ. 03-304920:

### ՎԱՐԴԱՆ ՇԱՆՊԱԶԻ ՇԻՐՄԱՔԱՐԻ ԲԱՅՈՒՄ

● ՀՈՂԵԿԱՆԱՍՏԵԱՆ ՊԱՇՏՈՆ ● ՅԻՇԱՍԱԿԻ ԽՕՍԸ  
Տեղի կ'ունենայ Կիրակի, 26 Հոկտեմբեր 2003, առաւօտեան ժամը 10:30ին, Ֆըրմ Շըպպէի Ազգային գերեզմանատան մէջ:  
Ծանօթ. Երթելը ապահովուած է Արագածի Ը.Յ.Ղ. «Դրօ» ակումբէն, առաւօտեան ժամը 10:00ին:

### ԶԱԲԱՆԵՒ ՕՐԵՐ 3-8 ՆՈՅՏԵՄԲԵՐ 2003

### ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԶԵՅԹՈՒՆԻ ՀԱՅՐԵՆԱԿԱԳԱԿԱՆ ՍԻՈՒԹԵԱՆ վարչութիւնը կը տեղեկացնէ, թէ Կիրակի, 26 Հոկտեմբեր 2003ին, Աճքի խաչի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ յաւարտ Ս. պատարագի, բոլոր գէթունցի մնջեցեալներուն հոգեհանգստեան արարողութիւն, որմէ ետք վեհարանի մէջ՝ Ազգահամրոյ: Հայրենակիցներէն կը խնդրուի մերկայ գտնուիլ:

### ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «Ն. ԱՂԱԼԵԱՆ» ՄԱՍՆԱՃԻՂ

### ԱՆԴԱՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 24 Հոկտեմբեր 2003, երեկոյեան ժամը 8:00ին, «Աղբալեան-Շ. Ս. Շ. Ս.» Մարգարայնապետի համալիրին մէջ:  
ԾԱՆՕԹ. Երեկոյեան ժամը 8:30ին մերկայանալու թիւ մեծաւաստութիւն պիտի նկատուի:  
ՎԱՐՉՈՒԹԻՆ

### ԱԿՆԱՐԿ ՌԻՇԱԳՐԱԹ ՓԱՐԱՏՈՔԱ

Վերջին օրերուն, կովկասեան շրջանի քաղաքական կեանքը կ'ապրի ուշագրաւ փարատոք մը: Այն պահուն, երբ Հայաստանի Ազգային Ժողովը օրէնքի նախագիծ մը կը մշակէր միջազգային ահաբեկչութեան դէմ պայքարին յաւելեալ թափ տալու առաջարկներով, դրացի Արարչականի մէջ քաղաքական նկատառելի հոսանքներ հակառակ ուղղութեամբ կը թիպարէին:

«Ենի Մուսաւաթ» տարածուն օրաթերթին մէջ լոյս տեսած յօդուածը աւելի քան բարացուցական է այդ իմաստով: Ըստ թերթին, եթէ Ուաշինկթըն Իլիաճ Ալիէր ճանչնայ իբրեւ նախագահ՝ անտեսելով Բազմապարտ, որ ինքզինքը յաղթական կը հռչակէ վերջին ընտրութիւններուն, ապա ընդհանրութեամբ պիտի պօրակցի... Պըն Լատէնին: «Թուրան»ի կողմէ հաղորդուած այլ լրատուութիւն մը, որ կը կրէ «Ալլահ Աքպար կամ կուտպալ ժողովրդավարութիւն» խորագիրը, կ'ըսէ. «Արարչականի հիասթափ հասարակութեան համար հետպետէ աւելի կը յստականայ Ռահապիլմի մօտենալու հեռանկարը»: Այլ տեղ մը, հապի շարաք մը առաջ, ուշագրաւ էր նաեւ չեչէնական յայտարարութիւն մը, ուր չեչէններ պատրաստ են եղեր ուսուի կողմէ իրենց ապերի եղբայրներուն կողքին, անշուշտ քաֆիր հայերուն դէմ: Իսկ չեչէնական այս տրամադրութիւնը մեծ խանդավառութեամբ ընկալուած էր Արարչականի քաղաքական թէ հասարակական շրջանակներուն կողմէ հաւասարապէս:

Պըն Լատէն, Չեչենիա, Ռահապիլմի: Ի՞նչ է այս երեքին հասարակ յայտարարութիւնը, եթէ ոչ ծայրայեղականութիւն, միջազգային ահաբեկչութիւն, որուն դէմ ամբողջ աշխարհը կը պայքարի այսօր ոգի ի բռնի:

Անգարայի ամբողջական նեցուկը վայելող Արարչականի մէջ փաստօրէն ոչ թէ ահաբեկչութեան դէմ պայքարելու տրամադրութիւն չկայ միայն, այլեւ կայ հակառակը: «Կեցցէ՛ Պըն Լատէն» աղաղակող ժողովուրդը միայն սեմփաթի կրնայ ունենալ միջազգային ահաբեկչութեան նկատմամբ. ինչ որ անշուշտ վտանգաւոր է ոչ միայն կովկասեան առումով, այլեւ՝ միջազգային իմաստով:

Հայաստանի և Արարչականի օրինակներով ստեղծուած այս փարատոքը անշուշտ չի վրիպիր միջազգային ընտանիքին ուշադրութենէն: Քանի մը օրէն ԵԱՀԿ Մինսքի խմբակի նախագահները՝ ամերիկացի Ռուտոֆ Փերինա, ռուս Եուրի Մերկուլիակով և ֆրանսացի Հանրի Ժարլիէ շրջան կ'այցելեն՝ տազնապի լուծման նոր առաջարկներ ներկայացնելու կողմէրուն: Թէ ի՞նչ պիտի ըլլայ անոնց կեցուածքը՝ ապերիական վերոյիշեալ տրամադրութիւններուն լոյսին տակ, չեչն գիտեր, սակայն մէկ քան յստակ է, որ անոնք ստիպուած են հաշի առնել մտահոգիչ ու վտանգաւոր այդ տրամադրութիւնները, ի խնդիր շրջանի կայունութեան:

Վերջապէս, կայ նաեւ այլ հարց մը, որ բնականաբար կը շարչարէ մարդուն միտքը. թուրքին արիւնակից ապերի ժողովուրդին այս «ահաբեկչամէտ» տրամադրութիւնը ի՞նչպէս պիտի թարգմանեն Ուաշինկթըն ու Եւրոպական Միութիւնը: Առաջինը՝ Անգարայի և Պաքոնի սերտ դաշնակիցը, երկրորդը՝ Անգարան ու Պաքոն իբրեւ իր լիիրաւ մէկ անդամ ընդունելու անխոհեմ տրամադրութիւններ ցուցաբերող կազմը:

Կա՛մ այն է, որ միջազգային ահաբեկչութեան դէմ պայքարը լոկ խօսք է ու ժողովուրդներուն աչքին փոշի ցանելու խաբկանք, կա՛մ ալ տեղ մը այլեւս պիտի սանձուին ուսահապական, պըն յատենեան կամ չեչէնական տրամադրութիւններով տոգորուող ապերի խուժանները, եւ ի վերջոյ արդարութիւնը պիտի վերականգնի ու ամբողջ աշխարհը պիտի ընդունի երկու «դրացի»ներուն յստակ տարբերութիւնը:

### ՀՐԱՉ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

### ՍՈՒՐԲ ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՎԵՐԱՆՈՐՈՂՄԱՆ ՖՈՆՏ

● Շաքէ Թորոսեանի մահուան առիթով,  
Տր և տիկին Արա Թորոսեան 100\$  
Տր և տիկին Նազարթ Չեքմեան 50,000 Լ. Ռ.  
Տր և տիկին Վարդան Նաճարեան 50,000 Լ. Ռ.  
Տր և տիկին Դեմիկ Լոճիկեան 20\$  
Տր և տիկին Ներսէս Թորոսեան 20,000 Լ. Ռ.  
Պըն. Մելիք Թորոսեան 25,000 Լ. Ռ.  
Տիկին Էօժեն Թորոսեան և զաւակուը 20,000 Լ. Ռ.  
Վերծին Գոճայեան 20,000 Լ. Ռ.  
Տիկին Արշալոյս Գոճայեան 15,000 Լ. Ռ.  
Պանդուխտ Քիպարեան 10\$  
Տր և տիկին Յակոբ Թորոսեան 10,000 Լ. Ռ.  
Սամուէլ Ստեփանեան ընտանիք 15,000 Լ. Ռ.

### Հ. Մ. Ը. Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ԳԱՀԻՐԵԻ ԵՒ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ՄԷՋ

18-21 Հոկտեմբերին, Հ. Մ. Ը. Մ.Ի Կեդրոնական վարչությունը իր լիազույցված նիստերը գումարեց Եգիպտոսի մայրաքաղաք Գահիրեի մեջ, ուր ներկայ գտնուեցան նաև եգիպտահայ միջքաղաքային պատկերասրահի մրցաշարին:

Լիազույցված նիստերու կողքին, Հ. Մ. Ը. Մ.Ի Կեդրոնական վարչությունը բազմաթիվ հանդիպումներ ունեցավ Գահիրեի պաշտպանի մարմիններու ներկայացուցիչներուն, թեմի Առաջնորդին եւ Եգիպտոսի մէջ Հայաստանի դեսպանին հետ:

Հ. Մ. Ը. Մ.Ի Կեդրոնական վարչութեան անդամները երէկ այցելեցին Աղեքսանդրիա եւ աշխատանքային հանդիպում մը ունեցան տեղւոյն Հ. Մ. Ը. Մ. - «Կամք» մասնաճիւղի պատասխանատուներուն հետ:

2003-2007 քառամեակի Հ. Մ. Ը. Մ.Ի Կեդրոնական վարչութեան այս առաջին լիազույցված ծառայեց միութեան Պատգամաւորական ժողովի որոշումներու գործակալնացման միջոցներու ճշդումին, «կապմակերպչական քառամեակ» հռչակուած յառաջիկայ չորս տարիներու աշխատանքներու ծրագրումին, Սփիւռքի, Հայաստանի եւ Ջաւախքի 90 մասնաճիւղերու աշխուժացման ի խնդիր: Լիազույցված քննեց նաև ՀամաՀ. Մ. Ը. Մ. ական եւ Համահայկական խաղերու վերաբերող հարցեր:

### ՄԱՐՈՆԻՆԵՐՈՒ ԼԻԿԱՅԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԻՒՆԸ ՎՍԱՀՈՒԹՅԱՒ ՄԻՇԵԼ ԷՏՏԵԻ

Մարոնիներու Լիկայի նախկին նախագահ Հարէս Շրհապ երէկ Լիկայի նախագահութիւնը յանձնեց նախկին նախարար Միշել Էտտէի:

Էտտէ շնորհակալութիւն յայտնեց մարոնիներու Նասրալլա Սֆէյր պատրիարքին, որ իրեն վստահած է նման պաշտօն մը: Ան խոստացաւ ամէն ջանք ի գործ դնել բարելաւելու համար մարոնի համայնքին կացութիւնը: Ան շեշտեց, որ ընտրուած է ոչ թէ քանդելու, այլ՝ հետապնդելու իր համայնքին բարգաւաճումը:

Էտտէ աւելցուց, որ կը պահպանէ քրիստոնէայ - իսլամ երկխօսութեան, որովհետեւ երկխօսութիւնը կը պայծառացնէ Լիբանանի պատկերը:

Իր կարգին, Շրհապ շեշտեց, որ Մարոնիներու Լիկան հաւասար չափով հեռաւորութիւն կը պահէր քաղաքական բոլոր կողմերէն, այնպիսի ժամանակաշրջանի մը, երբ լարուածութիւնը եւ քննադատութիւնները հասած են իրենց գագաթնակէտին:

Շրհապ ընդգծեց, որ Լիկան միշտ ալ ամուր պահած է իր կեցածքն ու սկզբունքները, հետեւելով մարոնի պատրիարքութեան որդեգրած ուղեգիծին, որուն կը հսկէ մարոնիներու Նասրալլա Սֆէյր պատրիարքը:

### ՀԱՄԱՍ Կ'ԵՐԴՆՈՒ ԱՆՊԱՏԱՍԻԱՆ ԶԶԳԵԼ...

Շարունակուած Ա. Էջեց

Նուսէյրաթի մէջ, հազարաւոր պաղեստինցիներ մասնակցեցան գոհեթուն յուղարկութեան, որուն ընթացքին Համասի պատասխանատուներ սպառնալիք ուղղեցին Իսրայէլի՝ գոյուցանելով նաև անոր հետ գործակցող պաղեստինցիները: Պաղեստինցի վարչապետ Ահմետ Քորեյ ըսաւ, որ կը բաժնէ պաղեստինցի ժողովուրդին ցամ ու գայտոյթը: Ան կոչ ուղղեց նաև ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին որդեգրելու յարմար ու անհրաժեշտ բանաձեւերը՝ փրկելու համար պաղեստինցի ժողովուրդը:

Կազայի դէմ իսրայէլեան յարձակումները դատապարտեց Եւրոպական Միութեան արտաքին քաղաքականութեան պատասխանատու Խալիէ Սոլամա. որ մտահոգութիւն յայտնեց Կազայի մէջ դրսևորուած իրավիճակով: Սոլամա դատապարտեց քաղաքայիններու սպանութիւնը:

### ԻՍՐԱՅԵԼ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ՄԻՋՈՍԱՌՈՒՄՆԵՐ ԿՈՐԴԵԳՐԵ

Կազայի դէմ գործուած յարձակումներուն դէմ վրիժառու արարքներ կանխարգիլելու հեռանկարով՝ Իսրայէլ ապահովութեան արտակարգ միջոցառումներու դիմեց: Իսրայէլեան բանակին ազդեցութեամբ յայտնեցին, որ յաւելանք թիով զինուորներ տեղադրուած են կարգ մը շրջաններու մէջ:

Բանակը կ'ակնկալէ, որ պաղեստինցեան արմատական թեւերը պիտի դիմեն վրիժառու արարքներու, որոնց կարգին՝ անձնասպանական գործողութիւններ: Վարչապետ Արիէլ Շարոն երէկ անգամ մը եւս արժարծեց Արաքաթը արտաքսելու հարցը: Շարոն ըսաւ, որ Արաքաթի արտաքսումը թեւ լաւ պիտի չըլլայ Իսրայէլի համար, մինչդեռ ատեն սակայն որեւէ յառաջիկայ պիտի չարձանագրուի պաղեստինցիներուն հետ, այնքան ատեն որ ան իշխանութեան վրայ կը մնայ: Շարոն չբացատրեց սակայն, թէ ի՞նչպէս մտադիր է քաղաքական թեմէն հեռացնելու Արաքաթը:

Միւս կողմէ, իսրայէլեան մամուլը գոյուցուց, որ Կազայի դէմ օդանային շարք մը յարձակումներ հակառակ սրդիւնը պիտի տան Իսրայէլի: Քաղաքական մեկնաբաններ կը գրէին, թէ Իսրայէլ հասած է այնպիսի հանգրուանի մը, ուր որոշած է պաղեստինցեան ամբողջ ընկերութիւնը իր թիրախը դարձնել:

●ԶՈՒԵՅԹԻ արտաքին գործոց նախարար շէյխ Մոհամետ Սապահ Սապահ քննադատեց Իսրայէլի կառուցած Պատը, գայն «չարիք»ի աղբիւր անուանելով:

Arabic header with logos: البيروت, الامارات, المستقبل, النصار, السفير

Սեփականաշնորհման հարցն ու պետական պիտոճէն եւ անոնց շուրջ կեցածքներն ու յայտարարութիւնները կը հանդիսանան լիբանանեան օրաթերթերուն երէկուան գլխաւոր լուրերը: Իսկ միջապային եւ շրջանային լուրերու կարգին իսրայէլեան յարձակումները, Իրաքի մէջ աներկացի պինտորներուն դէմ շարունակուող բռնարարներն ու Ֆրանսայի, Գերմանիոյ եւ Բրիտանիոյ արտաքին գործոց նախարարներուն Իրան այցելութիւնը կը հանդիսանան գլխաւոր լուրերը:

### ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԵԱՆՔ

«Անուար» գրած է, թէ կառավարութեան ծրագրին դէմ պայքարի ձեռնարկած են նախագահ Լահուտն ու փոխ վարչապետը: «Այլընտրանք պիտոճէն» վարչապետ Հարիրին կը դնէ հակառակ իր կամքին վայն ընդունելու կամ հրաժարելու պարտադրանքին առջեւ, նշած է թերթը, աւելցնելով, թէ այդ պարագային սեղմ կառավարութիւն մը պիտի յառաջացուի, որ պէսպիսի արտաքին հասցնէ նախկինին աշխատանքը:

«Սաֆիր»-ի համաձայն, Լահուտ մատնաշունչներ կը կատարէ Սինիորայի ծրագրի հիմնական կէտերուն եւ կը վիճեցնէ ծրագիրը: «Պետական պիտոճէներու կոչի» տեղի պիտի ունենայ ժողովի ընթացքին:

«Տիար» նշած է, թէ նախագահ Լահուտ յստակացուց իր մտնաշունչները պետական պիտոճէի նախագիծին շուրջ, Իսամ Ֆարէս ըսաւ, թէ սեփականաշնորհումը բարար պիտի չըլլայ պարտքերու լուծէն ձեռքազատելու, իսկ Սինիորա «Տիար» թղթակիցին հաստատեց:

### «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»Ի ԱՅՍՕՐՈՒՄՆԵՐ ԶԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

- 8:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն
8:45.- «Աստղեր»
9:00.- «Ուտիո - Թատրոն» կը ներկայացնեն Մարի Ող Մանուկեան եւ Մանուէլ Մարգրեան
9:40.- «Առաւօտեան տուն»
9:45.- «Աստղիկ» կնոջական յայտագիր
11:30.- Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ հայերէն
1:30.- Կայստանեան լուրեր
3:00.- Արաբերէն յայտագիր
հարցազրոյց «Սոսիթի» ընկերութեան ընդհանուր տնօրէն Փաթրիք Ֆարաճեանի հետ
Լիբանանի հաղորդակցութեան մարզին բարգաւաճման աշխատանքներուն մասին
4:45.- «Բարի երեկոյ Վանայ Չայն» ուղղակի ձայնասփռում՝ այլազան եւ հետաքրքրական միութիւն, երգեր, հարցազրոյց եւ այլն
8:00.- «Անձ» խաղանկով ընկերութեան մարզին ընդհանուր տնօրէն
նախագահ Ասատ յայտարարած է, թէ այսօր խաղադրութիւնը որեւէ ժամանակէ աւելի հեռու տրուած Կապայի վրայ

տեց, թէ կ'ուզէ պարտքերը թեթեւցնելու ձեւեր գտնել եւ ոչ թէ պանակ դիպել: «Նահար» գրած է, թէ նախագահ Լահուտ յայնօրէն անդրադառնալով ներկայացուած տեղեկագիրին, մեծ փոփոխութիւններ առաջարկած է եւ քննարկումներ ու քննադատութիւններ կատարած, իսկ Իսամ Ֆարէս կը պոչուցնէ արագ որոշումներ տալէ:

### ԻՐԱՔԵԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

«Տիար» դիտել տուած է, թէ Թուրքիա յայտարարեց, որ ներկայիս Իրաք ուժեղ առաքելու հարց գոյութիւն չունի: «Մի. Այ. Էյ.» Պրն Լատէնի ձայնը կը ճշգրտութիւնը կը հաստատէ:

«Անուար»-ի համաձայն, Ռաշինկորն յայտնած է, թէ մէկ օրուան մէջ 43 յարձակում տեղի ունեցած է ամերիկացի պինտորներուն վրայ:

Ըստ թերթին, Պլէր կը տառապի սրտի տագնապէ՝ իրաքեան հարցերու յոգնութենէն շուրջ տարի մը ետք:

«Սաֆիր» գրած է, թէ իրաքեան ցեղախումբերու պետերը կը խոստանան պայքարիլ թուրքերուն դէմ: «Հայաթ» նշած է, թէ Պաղեստին մէջ տեղի ունեցած խուռներամ ցուցարարներուն բողոքի հաւաքը ցրուելու համար ամերիկացի պինտորներ ստիպուեցան օդին մէջ կրակ բանալու:

### ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ՏԱԳՆԱՊ

«Քիֆահ Արապի» նշած է, թէ Արաքաթ կը յայտարարէ, որ ամէն պարագայի կառչած պիտի մնայ խաղադրութեան քարտէսին եւ իր օդանայները պատ կը ձգէ՝ յարձակումներ կատարելու:

«Տիար» գրած է, թէ Համաս եւ Ժիհադ կը խոստանան փոխադարձել իսրայէլեան յարձակումներուն եւ Պրն Չարոնը կը դատապարտէ խաղադրութեան գործընթացը վիճեցնելու յանցանքով:

«Սաֆիր»-ի համաձայն, յաջորդական քանի մը ռումբեր Կապայի մէջ 12 նահատակներ կը պատճառեն եւ տասնեակներով վիրաւորներ կ'արձանագրեն: Ըստ թերթին, Շարոն յայտարարած է, թէ ապահովութեան մեքոն քարտէսին մէկ պիշուտի պիտի կատարէ:

«Անուար» գրած է, թէ 10 պաղեստինցիներ սպանուած են, իսկ 75 անձեր վիրաւորուած Կապայի վրայ

ինկած ռումբի մը պատճառով:

Ըստ «Նահար»-ի, Ընդհանուր Ժողովը պիտի ներկայացնէ ծրագիր մը, որ կը դատապարտէ պարիպի կառուցումը: Իսրայէլեան օդանայներ կը հարուածեն պաղեստինցիները, իսկ Իսրայէլի վարչապետը կը հարուածէ Արաքաթը, գրած է թերթը:

«Մուսաբապալ»-ի համաձայն, Շարոն ակնարկութիւններ կը կատարէ Արաքաթը հեռացնելու, իսկ անոր պօրթերը կը շարունակեն պաղեստինցիներու կեանքեր խլել:

### ԱՅԼ ԼՈՒՐԵՐ

«Անուար» դիտել տուած է, թէ Մուսաբապալ Շարոնի Շէյխի մէջ պիտի տեսակցի Փաուլըի հետ:

Սուրիոյ փոխ նախագահը ըսած է, թէ ամերիկեան իշխանութիւնը պօրովիզ կը կանգնի իսրայէլեան պատերազմին եւ շարդերուն:

«Սաֆիր» գրած է, թէ Սպանիոյ բազաւոր կոչ ուղղեց քանակութիւնները աշխուժացնելու, իսկ Սուրիոյ նախագահ Պաշար Ասատ դիտել տուաւ, թէ Իսրայէլի իրարքներով մարդկութիւնը կը վերադարձնէ այլ դար մը:

Թերթը նշած է, թէ Պլէր կը վճարէ իրաքեան պատերազմին սակը՝ իր սրտին պարկերուն անկայունութեամբ:

«Տիար»-ի համաձայն, նախագահ Ասատ յայտնեց, թէ խաղադրութիւնը է՝ ու կը մնայ միակ ընտրանքը եւ նշեց, որ Իսրայէլ անխնայ կը հարուածէ պաղեստինցի ժողովուրդը:

«Նահար» գրած է, թէ ամերիկացի քանիչներ Գամալաբապալեցիին, որ պէսպիսի քննութիւններ կատարեն Սատտամի հաշիւներու գոյութեան շուրջ:

«Մուսաբապալ»-ի համաձայն, Մէուտակեան Արաբիա յայտնած է, թէ փնտռուած անձեր ձեռքազատած է եւ կը փորձէ պէսպիսոր պահել տան ցնցներ յայտնաբերել:

«Հայաթ» դիտել տուած է, թէ Իրան կը խոստանայ թափանցիլ եւ յստակ ըլլալ եւ ամէն տեսակի դիրքութիւններ տալ քննիչներուն:

«Քիֆահ Արապի» նշած է, թէ Պուշտահար թիւ ըսաւ, որ անոր յայտարարութիւնները երկփեղկում կը յառաջացնեն:

Ըստ թերթին, նախագահ Ասատ յայտարարած է, թէ այսօր խաղադրութիւնը որեւէ ժամանակէ աւելի հեռու ըլլալ կը թուի:

### ՓԱԹՐԻՔ ՅԱՐԱՃԵԱՆ՝ «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»ԷՆ

«Սոսիթի» ընկերութեան ընդհանուր տնօրէն ՓԱԹՐԻՔ ՅԱՐԱՃԵԱՆ այսօր՝ Չորեքշաբթի, 22 Հոկտեմբեր 2003, կէսօրը ետք ժամը 3:00ին կը պատասխանէ ՀԱԼԱ ՀԱՍՏԱՍԻ հարցումներուն Լիբանանի հաղորդակցութեան մարզին բարգաւաճման եւ արդիականացման աշխատանքներուն մասին:

### ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

● ԽՐԴՆԻՆԻՆԻ նախագահ Նեպոլի Պրորի երէկ ընդունեց Պապալէք - Հըրմէլի երեսփոխաններու մէկ պատուիրակութիւնը, որուն մաս կը կազմէին Զագի Զայթէր, Հիւսէյն Զաօ Զասան, Մոհամէտ Եագի եւ Նատէր Սուբբար: Հանդիպումին քննարկուածի առարկայ դարձան շրջանին դիմագրուած ջուրի հարցերը:

● ԸՆԿԵՐԱՅԻՆ Ապահովագրութեան Ազգային Սնտուկը երէկ հաղորդեց, որ իր ներկայացուցիչները պիտի մասնակցին Հինգշաբթի (վաղը) օրուան ցոյցին, որ կապակերպուած է Աշխատաւորական Ընդհանուր Համադաշնակցութեան կողմէ:

Ապահովագրութեան Սնտուկի սենտիքան կոչ ուղղեց պահելու սնտուկին պիտոճէին հաւատարմութիւնը եւ հեռու մնալու այս մարզը ապապետականացնելու փորձերէն:

● ՔԱՂԱԲԱՊԵՏԱՐԱՆՆԵՐՈՒ զաշտօնեաները, ինչպէս նաև մամուլը եւ տեղեկատուութեան ծրագրերը գործող պաշտօնեաներու սենտիքաները հրապարակեցին պաշտօնական հարցորդագրութիւն մը, որուն մէջ կոչ ուղղեցին ընդարձակելու գործադուրը, ընդգծելով նաև մամուլը:

● ԳՐԱՄԱՏՈՒՆԵՐՈՒ զաշտօնեաներ իրենց կարգին յայտնեցին, որ կը պօրակցին Հինգշաբթի օրուան գործադուրին, որովհետեւ երկրին մէջ աշխատաւորական դասակարգին նկատմամբ ցուցաբերուած անտեսումը կը սպառնայ ընկերային ապակայունացման:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՅՆ ՀԻՄՆԱՐԿ (Գործակցութեամբ եւ հովանաւորութեամբ Երեսփոխանի Պետական Համալսարանի)

Համագործակցութեամբ Ազգ. Առաջնորդարանի Ուսումնական Խորհուրդին

### ՀԱՅՈՑ ԼԵՉՈՒԻ ԽՏԱՅԵԱԼ ԴԱՍԸՆԹԱՅՔ

Հայերէնի բարելաւման անվճար ձեռնարկ՝ պատահիներու, երիտասարդներու, մայրենիով դասաւանդող ուսուցիչներու եւ հայկական հաստատութիւններու պաշտօնեաներուն համար

90 ժամեայ դասաւանդութիւն՝ 4 Նոյեմբեր 2003 - 13 Յունիս 2004

Դասաւանդութեան օրեր՝ ամէն Երեքշաբթի եւ Հինգշաբթի, երեկոյեան ժամը 5:00 - 6:30, Մ. եւ Հ. Արլայեան ճեմարան, Մրզիք:

Դասընթացի ատարարին՝ համապատասխան վկայագիր

Մանրամասնութեանց համար հեռաձայնել 04 - 712603, 04 - 712604, 03 - 429685 քիւրու

Հ. Բ. Ը. Մ. - Հ. Ե. Ը. «ԱՆԳՐԱՆԻԿ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄՈՒԹՈՒՄԸ Գործակցութեամբ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ (L. A. U.) Կը ներկայացնէ՝ ԵՐԵՒԱՆԻ ՄՆՋԱԽԱՂԻ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՍՐՈՆԸ Կիրակի 16 եւ Երկուշաբթի 17 Նոյեմբեր 2003, երեկոյեան ժամը 8:30, «ԽԱՂԸ» եւ «ԱՐԹՄԻՒ ԵՐԱՉ» Երեքշաբթի 18 եւ Չորեքշաբթի 19 Նոյեմբեր 2003, երեկոյեան ժամը 8:30, «ՉԱՐԻ ԾԱՂԻԿՆԵՐ» եւ «ԹՈՒԿՔ» L. A. U. ԿԻԼՊԵՆԿԵԱՆ ԱՍՓԻԹԱՍՐՈՆ 10,000 L. n. - 20,000 L. n. - 30,000 L. n. Տոմսերը պայտփով հեռաձայնելով՝ Հ. Ե. Ը. Կեդրոնական Գրասենյակ 04/523043/4 L. A. U. Beirut 01/786456 PROMENADE Hotel 01/874774 VIRGIN Megastore - BHV Jnah - ABC Achrafieh

Մայրենիի կատարելագործման հրատարակ





# Թուրքիա եւ Սիւրիայի մասին

## ԲՐԻՏԱՆԱՑԻՆԵՐԸ ԿԸ ԽՈՒՍԱՓԻՆ ՊԱՔՈՒՃԷՅՅԱՆ ՔԱՐԻՒՂԱՏԱՐԻ ԾՐԱԳԻՐԻՆ ՄԷՋ ՆԵՐԴՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼԷ

«Քարիւղատարի կառուցման ծրագիրին մէջ նիւթական ներդրում կատարելու բրիտանական կառավարութեան վերապահութիւնը պատճառ դարձաւ, որ Համաշխարհային Դրամատունը ու ուրիշ միջազգային վարկատու կազմակերպութիւններ չֆինանսաւորեն քարիւղատարին կառուցման ծրագիրը»: Ասիկա Հաստատում մըն է՝ քաղուած Պաքուի «ՏՏԵՊ Կազէթ»էն: Կը թուի, թէ Ազրպէյճանի մէջ մարդիկ սկսած են արդէն հասկնալ, որ այսպէս կոչուած «դարձու ծրագիրը» կրնայ ձախողուիլ: Նշենք, որ ծրագիրը կը ղեկավարուի «Պրիթիլ Փեթրոլիում» ընկերակցութեան կողմէ, սակայն ան մերժած է առանձին ֆինանսաւորել ծրագիրը՝ խուսափելով անոր ամբողջ պատասխանատուութիւնը ստանձնելէ: Անոնք կը նախընտրեն ինչ, որ ուրիշ ներդրողներ ալ մասնակցին, յատկապէս՝ Համաշխարհային Դրամատունը եւ վերակառուցման եւ Զարգացման Եւրոպական դրամատունը: Սակայն ցարդ ներդրողներէն ոչ ոք մասնակցութեան հաւանութիւն տուած է, նկատի առնելով, որ քարիւղատարը պիտի անցնի աշխարհագրականօրէն աշխուժ եւ երկրաշարժային շրջաններէ:

Համաշխարհային Դրամատան տնօրէնութիւնը որոշեց վետաձգել քննարկումները ծրագիրին շուրջ: Մերժումին պատճառը վրաստանի կենսոլորտի եւ բնական աղբիւրներու նախարարութեան կողմէ բանեցուած ճնշումն էր:

Աւելին՝ ծրագիրը խախտումներ կ'ենթադրէ նաեւ մարդկային իրաւանց մարզին մէջ: «Էմբարսի Ինթերնէշնըլ» մարդկային իրաւանց պաշտպան կազմակերպութիւնը կը հաւատայ, որ «Թուրքիոյ կառավարութեան եւ քարիւղատարի միջազգային ընկերակցութեան միջեւ կնքուած համաձայնութիւնները կը ստեղծեն պայմաններ, որ կ'անտեսուին քարիւղատարի երկայնքին ապրող հազարաւոր մարդոց իրաւունքները, եւ անոնք կը հակասեն մարդկային իրաւանց եւրոպական համաձայնագիրի կէտերուն»: Ծանօթ է, որ տարանցիկ համաձայնութիւնը պարտք կը դնէ Թուրքիոյ կառավարութեան վրայ՝ հատուցում տալու ընկերակցութեան, եւ ըստ «Էմբարսի Ինթերնէշնըլ»-ի ներկայացուցիչ փրոֆ. Ռիչըրտ Լիտըրի, ասիկա կը նշանակէ, թէ Թուրքիա ստիպուած պիտի լրջաբար խախտել իր քաղաքացիներուն իրաւունքները, եթէ անոնք սկսին հակասել առեւտրական շահերուն: «Ասիկա շատ վտանգաւոր նախընթաց մըն է», կ'ըսէ փրոֆ. Լիտըր: Կազմակերպութեան տնօրէնութիւնը կը հաւատայ, թէ «ընկերային պարտաւորութիւններ ունենալով» «Պրիթիլ Փեթրոլիում»ը իրաւունք չունի քաղաքացիները թրջակայ կառավարութիւնը, որ կ'անտեսէ մարդկային իրաւունքները յարգելու իր պարտաւորութիւնները: Հետեւաբար բրիտանական մարդկային իրաւանց պաշտպանները պէտք է ստիպեն կառավարութեան, որ չօժանդակէ ծրագիրի իրականացման:

Վերջերս, ներկայացուցիչներու Տան Հերթական հաւաքին ընթացքին խօսք առնելով, Բրիտանիոյ առեւտուրի նախարար Լորտ Սէյնպլըրի նշեց, թէ վարկերու ծառայութեան արտածումներու բաժանմունքը չի կրնար որոշում կայացնել Պաքու-Թիֆլիս-ձէճհան քարիւղատարի կառուցման համար վարկ յատկացնելու գծով: Ըստ Սէյնպլըրի, գրասենեակը կրնայ վարկ տրամադրել միայն այն պարագային, երբ վստահ ըլլայ, թէ քարիւղատարը որբէկ վտանգ չի սպառնար կենսոլորտին եւ մարդկային իրաւանց: Սակայն տակաւին չկան հաստատ հիմքեր այդ գծով:

«ՓԱՆԱՐՄԻՆԵՐ» ԿԱՅՔ

## ԹՈՒՐԻՔԻԱՆ ԸՆԴՈՒՆԵԼԻ ՉԷ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԷՋ

Աթէնքի ու համայն Յունաստանի Խրիսթոտուլոս արքեպիսկոպոսը Պրիւքէլի մէջ հանդիպած է Եւրոպական Ժողովրդային Ընկերակցութիւններու խմբակցութեան նախագահ եւ Եւրոպայի մէջ ազդեցիկ քաղաքագէտ Հանս Կերտ Փեթէրինկի հետ: Արքեպիսկոպոսը շնորհաւորած է գայն Եւրոպայի ապագայ սահմանադրութեան մէջ քրիստոնէութեան վկայակոչման մասին առաջարկած ու ընդունուած իր բարեփոխման կապակցութեամբ:

Հանդիպման ընթացքին քննուած են երեք հիմնահարցեր՝ Կիպրոսի Եւրոպական Միութեան անդամակցութիւնը, Թուրքիոյ մէջ իսլամի աստուածաբանական ժառանգաւորաց ուսումնարանի վերաբացման արտօնագիրի գործնականացումը, եւ Թուրքիոյ Եւրոպական Միութեան անդամակցութիւնը:

Արքեպիսկոպոսը բաց է իրաց հաստատած է, թէ կ'ընդունի Թուրքիոյ պետականութեան հանգամանքը, սակայն դէմ է Եւրոպական Միութեան Թուրքիոյ անդամակցութեան, քանի որ թրջական մշակոյթը բոլորովին օտար է Եւրոպական քաղաքակրթութեան, ուստի Թուրքիա տեղ ունի Եւրոպայի մէջ:

Հանս Կերտ Փեթէրինկը գոհունակութեամբ հաստատել է Ետք համայն Յունաստանի կրօնական առաջնորդին զիրքաւորումը, պարզած է իր կեցուածքը՝ ըսելով, թէ ինք եւս դէմ է Թուրքիոյ անդամակցութեան, ու կողմնակից՝ Եւրոպական Միութիւն - Թուրքիա յատուկ յարաբերութիւններու:

## ԹՈՒՐԻՔ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ ԲԱՆԱԳՈՂՈՒԹԵԱՄԲ ԿԸ ՉԲԱՂԻՆ

Հայրենի «Ազգ» օրաթերթը վերջերս անդրադարձաւ թրջական «Վազըթ» թերթի 24 Սեպտեմբերի թիւին մէջ լոյս տեսած չափազանց ուշագրբում մէկ յոդուածին, որ կ'անդրադառնայ թուրքականազեմական բարձրագոյն մակարդակներու մէջ տարածուած բանագողութեան երեւոյթին: «Վազըթ» դիտել տարով, որ բանագողութեան կը դիմեն համայնարաններու մէջ բարձրագոյն պաշտօններ զբաղեցնող ակադեմիականներ, որոնք այսպէս ալ լաւ ձեռք կը վարձատրուին, կ'եզրակացնէ, թէ այս երեւոյթը ոչ մէկ ձեռով կ'առնչուի Թուրքիոյ բնակչութեան ջանքերին մեծամասնութեան չբաւարարելուն:

«Վազըթ» թերթը բանագողներու շարքին կը նշէ Պոլսոյ համալսարանի նախագահ Քեմալ Ալեմտարոյուն, նոյն համալսարանի ընկերաբանութեան հիմնարկի դասախօս դոկտ. Սեմրա Իւնալը, Իգմիրի համալսարանի բժշկութեան կաճառի դասախօս դոկտ. Աթալայ Արքան եւ Անգարայի մէջ գործող «Ղազի» համալսարանի դասախօս Ուղուր Հոսոյլուքլին:

Պոլսոյ համալսարանի նախագահ Ալեմտարոյուն նոյնութեամբ եւ ամբողջութեամբ իւրացուցած է «Նիւր Լափարոսքովի Տիվլիֆի մըրթ» աշխատութիւնը, որուն թրջէն թարգմանութիւնը հրատարակած է իր ստորագրութեամբ: Վերջինիս համալսարանի բանագողութեան դէմ պայքարող կեդրոնը, բացայայտելով այս իրողութիւնը, հրատարակած է գայն համացանցի վրայ: Ասոր հետեւած է նախաձեռնութիւնը խումբը մը թուրք գիտնականներու, որոնք նոյնպէս համացանցի վրայ բանագողութեան նուիրուած էլ մը բացած են եւ բացայայտած՝ միւս բանագողները: Ի դէպ վերջինիս համալսարանի րացայտումը նոյննու:

Թեմաք ներկայացուած է թրջական «բանագողութիւն» կայքէջին վրայ: Ինչ կը վերաբերի Պոլսոյ համալսարանի ընկերաբանութեան հիմնարկի դասախօս դոկտ. Սեմրա Իւնալին, այս ան իր դոկտորական աւարտաճառը «Կազմած» է արտասահմանի մէջ հրատարակուած աշխատութիւններէ գողցուած հատուածներով: Ան այսպիսով արժանացած է ղոկտորի, եւ այսօր փրոֆեսորի կոչումին:

«Վազըթ» կը նշէ, թէ Իգմիրի բժշկական կաճառի դասախօս դոկտ. փրոֆ. Աթալայ Արքան Գերմանիոյ մէջ հրատարակուած ուսումնասիրութիւնը մը թրջերէնի թարգմանած եւ հրատարակած է իր ստորագրութեամբ: Իր այս արարքին համար ան Իգմիրի համալսարանի բժշկաներու տան եւ Թուրքիոյ բժշկաներու միութեան կողմէ արժանացած է 15 օր մասնագիտական գործունէութեանը զբաղելու իրաւունքէն զրկուելու պատիժին:

Շատ աւելի յանդուգն գտնուած է «Ղազի» համալսարանի դասախօս Հոսոյլուքլին: Ան բժշկագիտական անգլերէն յոդուած մը իրրեւ իրը ներկայացուցած է Բարձրագոյն ուսումնական խորհուրդին՝ նոյնիսկ առանց վարուի:

Ժամանակ վատնելու թարգմանութեան վրայ: Թերթը կը թուէ այն գիտնականները, որոնց ուսումնասիրութիւններէն «օգտուած» է այս «գիտնականը» եւ միաժամանակ գարմանք կը յայտնէ, թէ Բարձրագոյն ուսումնական խորհուրդը լմբողունումով մօտեցած է անոր: «Վազըթ» նկատել կուտայ, թէ վերոնշեալ թուրք բոլոր գիտնականները անդամ են նոյն խորհուրդին, որ կը տնօրինէ Թուրքիոյ մէջ բարձրագոյն ուսումնական հաստատութիւններու գործունէութիւնը: Հետեւաբար, կը շարունակէ թերթը, բանագողութեան պարագային այդ գիտնականները կ'առաջնորդուին Բարձրագոյն ուսումնական խորհուրդին երաշխաւորած անպատեխութեամբ:

«Ազգ» իր կարգին դիտել կու տայ, որ այս օրերուն լարուած են խորհուրդին հետ Արդարութիւն եւ Բարգաւաճում Կուսակցութեան կառավարութեան յարաբերութիւնները: Կառավարող կուսակցութիւնը եւ «Վազըթ» թերթը լույստաւած են իսլամական են, իսկ Թուրքիոյ Բարձրագոյն ուսումնական խորհուրդը աշխարհիկ մտաւորութեամբ կը ղեկավարուի:


## ԱՉՐՊԵՅՃԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՎ



## ԱՉՐՊԵՅՃԱՆ - ՎՐԱՍՏԱՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏՔԵՐՈՒՎ ԵՐԱԲԵՐԵԱԼ

Վրաստան եւ Ազրպէյճան վերջերս Պաքուի մէջ ստորագրած են Վրաստանի արտաքին պարտքի վերադասաւորման մասին համաձայնագիր մը: Վրաստանի տնտեսութեան նախարարութեան համաձայն, համաձայնագիրը կը նախատեսէ 20 միլիոն տոլարի արժողութեամբ Ազրպէյճանին Վրաստանի ունեցած պարտք վերադասաւորել՝ 20 տարուան ժամկէտով: Ազրպէյճանի համաձայն գտնուած է նաեւ պարտքի տոկոսը չորս առ հարիւրէն նուազեցնել երեքի:

Նշենք, որ Փարիզեան ակումբի անդամ պետութիւններուն (որոնց շարքին է նաեւ Ազրպէյճան) Վրաստանի ընդհանուր պարտքը 750 միլիոն տոլար է: Վրաստան մօտ 10 միլիոն տոլարի արժողութեամբ պարտք ունի նաեւ Հայաստանի: Այս գծով, սակայն, երկու երկիրներուն միջեւ տակաւին համաձայնութիւն չկայ:



**ՀԱՄԱԶԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄՈՒԹԻՒՆ**  
**ԱՐԱՄ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ**  
**100ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ**  
**ՆՈՒԱԳԱՀԱՆԴԵՍ**  
 Ելոյթ կ'ունենան  
**Հայրենի միջազգային դաշնակախար**  
**ԱՐՄԵՆ ՊԱՊԱՆԱՆԵԱՆ**  
**Հայրենի տաղանդաւոր ջութակախար**  
**ՄԱՐՏԻՆ ԵԱՒԵԱՆ**  
 Հովանաւորութեամբ՝  
**Լիբանանի մէջ Հայաստանի արտակարգ**  
**եւ լիազօր դեսպան**  
**ԱՐԵԳ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ**  
**Տեղի կ'ունենայ Շաբաթ, 25 Հոկտեմբեր 2003ին,**  
**Երեկոյեան ժամը ճիշդ 8:30ին, Ամերիկեան**  
**համալսարանի «Էսէմպլի հոլ»ին մէջ**  
 Տոմսերը ստանալ  
 Down Town  
 BHV Jnah  
 Համազգայինի գրախանութն (Շաղոյեան կեդրոն, Պուրճ Համուտ), Տիւրքիոյ Երբա (Պուրճ Համուտ), Սքիսիո Վաչէ (Հաճըն), Obelix գրախանութ (Անթիլիա) եւ Ելոյթի օրը կ'իջէն կամ հեռաձայնել 01 - 249375 եւ 01 - 265899 քիւերուն:

# ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐ

## ՍՈՖԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ ԲԱՐԳԱՒԱՃՈՒՄԸ - ԴՐԱՄԱՏՈՒՆԵՐ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՒՆ

Սոֆիայի հայ համայնքը, որ պուլկարահայ կեանքին կեղծոնը դարձած էր, արագորէն բարգաւաճեցաւ: Հիմնուեցան համագործակցական դրամատուներ, Հայկական տուն եւ կազմակերպուեցաւ կրթական կեանքը:

### ՀԱՄԱԳՈՐԾԱԿԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՆԵՐ

Փլովտի մէջ 1919ին հիմնուած էր մալգարացիներու Մամիկոնեան հայրենակցական միութիւնը, որ աշխուժ գործունէութիւն ձեռնարկեց Պուլկարիոյ եւ յատկապէս Սոֆիայի մէջ: Միութիւնը յատուկ յանձնարարութեամբ ստեղծեց, որ Ա. Աշխարհամարտէն ետք իրենց հայրենի օճախները վերադարձած մալգարացիներուն օժանդակութեան ձեռք երկարեց եւ երկար փնտրութեան ընթացքին Սոֆիայի անապատներէն հաւաքեց եւ Մալգարայ վերադարձուց հարկուոր որբեր ու այրիներ:

Մամիկոնեան հայրենակցական միութեան վարչութիւնը, Արտաշէս Հալբեքեանի գլխաւորութեամբ, 25 Յուլիս 1931ին Սոֆիայի մէջ ստեղծեց փոխօգնութեան դրամարկը: Հիմնադրման ժամանակ քառասուն մալգարացիներ ներդրեցին իւրաքանչիւրը հարիւրական լեւալոյ համետ գումարով ստեղծուած դրամարկը՝ կազմուեցաւ համագործակցական դրամատուն, որ պուլկարական համագործակցական ժողովրդական դրամատուներու միութեան անդամ դարձաւ:

Համագործակցական դրամատան ստեղծման եւ կազմակերպման աշխատանքներուն իր աշխուժ մասնակցութիւնը բերաւ տնտեսագէտ փրֆեսէօր Վահան Թոթոմեանց: Նորաստեղծ հայկական դրամատունը կոչուեցաւ «Թրա-

200 միլիոն լեւա դրամագլուխով:

Հայկական համագործակցական «Թրակիա» վարկային դրամատունը ունէր նաեւ իր պահեստի դրամարկը, ուր 1931ին ներդրուած էր 31,802 լեւա դրամագլուխ: 1938ին ներդրուած դրամագլուխը հասաւ եօթը միլիոն լեւայի:

Դրամատունը տոկոսով վարկեր կը յատկացընէր հայ արհեստագործներուն, փոքր առեւտրականներուն, ծառայողներուն, պաշտօնեաներուն եւ բանուորներուն: 1932ի տուեալներով, 249,950 լեւա վարկեր տրամադրուած են, իսկ 1934ի տուեալներով՝ 40 միլիոն լեւա:

«Թրակիա» դրամատունը 1932էն սկսեալ պարբերաբար սկսաւ լոյս ընծայել իր «Տեղեկագիր» տեղեկատուն, ուր մանրամասն հաշուետուութիւններ կը ներկայացնէր:

Սոֆիայի մէջ 1933ին հիմնուեցաւ հայկական համագործակցական երկրորդ դրամատունը՝ «Սեւան», որ 30 Մայիս 1936ին վաւերացուեցաւ եւ դարձաւ պուլկարական ժողովրդական դրամատուներու միութեան անդամ: Դրամատան հիմնադիրները եւ վարչութեան անդամներն էին՝ Արամ Մկրտիչեան, Երուանդ Դաւիթեան, Հրանդ Իւթիւճեան, Սմբատ Արիսեան եւ այլք:

Դրամատունը իր հիմնադրութեան ժամանակ ունէր ութսուն հազար լեւա դրամագլուխ: Երկու շարժի ետք այդ դրամագլուխը հասաւ 200 հազար լեւայի: 1938ի տուեալներով, «Սեւան» ունէր 203 անդամ, եւ չըջանառութեան մէջ՝ 64,724,457 լեւա: Իսկ 1939 - 1940ի տուեալներով, դրամատունը աւելի քան 104 միլիոն լեւա դրամ էր չըջանառութեան մէջ:

### ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՒՆ

Սոֆիայի հայ համայնքը ազգային, հասարակական, մշակութային եւ կրթական կեանքը աշխուժացնելու նպատակով 1933ին ձեռնարկեց Հայկական տան շինարարական աշխատանքներուն, որոնք աւարտեցան 1936ին:

Սոֆիայի Հայկական ազգային տունը քառալայկ շէնք մըն է՝ առաջին յարկը խանութներ են, որոնցմէ զանձուող վարձքը կը յատկացուէր Ազգային Արամեան վարժարանին: Երկրորդ յարկը յատկացուեցաւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ երրորդ յարկին վրայ հաստատուեցաւ Արամեան վարժարանը, իսկ չորրորդ յարկին վրայ՝ առաջնորդարանը, թաղական խորհուրդի եւ դպրոցի հոգաբարձութեան գրասենեակները:

### ԳԻՄՈՒՄՆԵՐ՝ ՔԱՂԱՔԱՅԻՈՒԹԻՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Առաջին Աշխարհամարտէն եւ Իզմիրի աղէ-

տէն ետք Սոֆիա ապաստան հայերէն շատեր քաղաքացիութիւն չունէին եւ նախնական անցագիր կը գործածէին: Զրկուած ըլլալով քաղաքացիական իրաւունքէ՝ անոնք դժուարութիւններ կը դիմագրաւէին գործ գտնելու եւ աշխատանքի հաւասար իրաւունքներ ձեռք ձգելու համար:


Պուլկարիոյ մէջ 1923ի պետական հարուածէն ետք իշխանութեան տիրացած ծայրայեղ աջակողմեան եւ ֆաշիստական արեւելումով կառավարութիւնը (սկիզբը՝ Ալեքսանտր Յանքովի գլխաւորութեամբ, որ յետոյ փոխարինուած էր Անտրէյ Լիպիչեւով) գաղթականները կ'ենթարկէր ազգային խտրականութեան: անոնց կայուն աշխատանք ապահովելու հարցը յաճախ արուեստական խոչընդոտներու կը հանդիպէր:

Պորիս Գ. ցարին գորակցութիւնը վայելող Զինուորական լիկան 1934 Մայիս 18էն 19 լուսցող գիշերուան ընթացքին պետական հարուած կատարեց եւ Բիմոն կէտրկիւն դարձաւ վարչապետ իշխող խմբակը ծանօթ դարձաւ Զվենօ Նիկիթայի կարգ) անունով:

Ստեղծուած կացութեան առջեւ Սոֆիայի թաղական խորհուրդը առաջնորդ Երուանդ եպօս. Փերտահեանի նախաձեռնութեամբ դիմում ներկայացուց կառավարութեան, որպէսզի քաղաքացիութիւն չունէր Սոֆիայի հայերուն, բայց՝ ապարդիւն:

Պորիս Գ. ցարի հետգհետէ իր հաւատարմները տեղաւորեց բանակին մէջ, Բիմոն կէտրկիւնը պաշտօնագրկեց, եւ նոր կառավարութիւն կազմուեցաւ կէտրկի Գոսէյվանովի գլխաւորութեամբ: Հաստատուեցաւ թագաւորական-գիւնուորական մենատիրութիւն:

Այնուհետեւ Սոֆիայի կազմական խորհուրդը եւ ազգային քաղաքական ու հասարակական



կազմակերպութիւնները միասնական ջանքերով աշխատանք տարին եւ կրկին ու կրկին դիմումներ կատարեցին եւ խնդրագիրներ ներկայացուցին կառավարութեան՝ քաղաքացիութիւն չունէր հարցով, բայց բոլոր աշխատանքները մնացին ապարդիւն:

### ԳՊՐՈՑՆԵՐ

Սոֆիայի մէջ 1896ին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ կողքին, Տէր Արիստակէս քահանայ Յէսայեանի ջանքերով բացուած էր Արամեան տարրական (թերի միջնակարգ) քառամեայ վարժարանը՝ երեսուն աշակերտներով: Մինչեւ 1912ի Պալքանեան պատերազմը դպրոցի աշակերտութեան թիւը եղած է երեսունէն քառասունի միջին: Պալքանեան պատերազմին՝ 1912ին եւ այնուհետեւ՝ Ա. Աշխարհամարտին դպրոցը փակուեցաւ եւ վերաբացուեցաւ 1922ին՝ 120 աշակերտներով:

Արամեան վարժարանը 1937ին վերածուեցաւ միջնակարգ վարժարանի եւ հաստատուեցաւ Սոֆիայի Հայկական տան երրորդ յարկին վրայ: Պուլկարիոյ հայոց առաջնորդ Ստեփանոս արք.



Յովակիմեան, որ շինարարական աշխատանքներու սկսումէն ետք վախճանած էր 1934ին, 200 հազար լեւա յատկացուեցած էր դպրոցին համար, որ յետոյ անոր յիշատակին վերակոչուեցաւ Յո-



վակիմեան վարժարան: 1939ի տուեալներով, դպրոցը ունէր 200 աշակերտ: 1944ին անիկա վերանուանուեցաւ Սպանդարեան վարժարան: Գէորգ Մեւրոպի նախաձեռնութեամբ 1923ին Փլովտի մէջ հիմնուած Մեւրոպեան ճեմարանը 1924ին տեղափոխուեցաւ Սոֆիայի Փաւլովօ արուարձանը: 1928-1929 տարեշրջանին ճեմարանը ունէր նախակրթարան եւ միջնակարգ բաժիններ, իսկ 1929-1930 տարեշրջանին վերածուեցաւ տասնամեայ դպրոցի: Տնտեսական ծանր պայմաններու պատճառով 1937ին դպրոցը փակուեցաւ, եւ անոր աշակերտներուն մեծ մասը Յովակիմեան վարժարան փոխադրուեցաւ, ոմանք ալ սկսան օտար վարժարաններ յաճախել:

Սոֆիայի համալսարաններուն մէջ 1937-1938 կրթական տարեշրջանին կային 24 հայ ուսանողներ: անոնցմէ վեցը՝ պետական համալսարանի բժշկական բաժանուունքին մէջ, չորսը՝ իրաւաբանական, երկուքը՝ լեզուաբանական, մէկը՝ անասնաբուժական, մէկը՝ քիմիական, մէկը՝ գիւղատնտեսական բաժանուունքներուն մէջ: Հինգ ուսանողներ կային Սոֆիայի ազատ համալսարանին մէջ, երեք ուսանող՝ Երաժշտական ակադեմիային մէջ եւ մէկ ուսանող Գիտական ընկերութեան բարձրագոյն դպրոցին մէջ:

Սոֆիայի հայկական դպրոցներուն մէջ ուսուցչութեան պաշտօն վարած են պուլկարահայ մտաւորականութեան ներկայացուցիչներ՝ Սարգիս Փաշաճեան, Վիթթորիա Մուսմեան, Գէորգ Մեւրոպ, Դանիէլ Զարմուշ, Սարգիս Փաշաճեան, Պարոյր Ասատուր, Գրիգոր Ահարոնեան, Զարեհ Պլպուլ, Օննիկ Փանիկեան (Զարմուշի), Արմէն Սեւան եւ այլք:


### ՍՈՖԻԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԸ ՄԻՆՉԵՒ ՆԵՐԿԱՅ ժԱՄԱՆԱԿՆԵՐԸ

Պուլկարիոյ մէջ խորհրդային բանակի մուտքէն (1944 Ապրիլ) եւ այնուհետեւ համայնավար վարչակարգի հաստատումէն ետք, Սոֆիայի հայ համայնքին մէջ 1944ին աշխարհային հիմնուեցաւ «Երեւան» մշակութային կազմակերպութիւնը, որ ունէր մասնաճիւղերը փոխարինեցաւ այդ ժամանակ գործող միութիւններն ու կազմակերպութիւնները: Ան ի կազմակերպեց երգի, պարի, թատերակային («Սունդուտ») եւ այլ խումբեր


### Սոֆիայի Հայկական տունը

եւ իր համաձայն պաշտօնաթիւնը՝ «Երեւան»: Այնուհետեւ Սոֆիայի մէջ սկսան հրատարակելի շուրջ քառասուն պարբերականներ, որոնց առաջինը եղաւ «Հայաստան» (1945ին): Սոֆիայի հայ համայնքի անուանի դէմքերէն յիշեցրէք գրագէտները՝ Զարեհ Պլպուլ, Պարոյր Ասատուր, Օննիկ Զարմուշ, Սարգիս Փաշաճեան, Վարդան խաչիկեան, Գէորգ Մեւրոպ, Սեւդա Սեւան, Գրիգոր Փափազեան, թարգմանիչներ՝ Յակոբ Օրմանճեան, Կարո Հայրապետեան, բեմադրիչ Գրիգոր Ագարեան, խմբագրող Վլադիմիր Գաբրիէլ Գաբրիէլեան, Տիրան Բարիբեան, Յակոբ Զակըրով եւ այլք: Ներկայիս մտաւորապէս չորս հազար հայեր կը բնակին Սոֆիայի մէջ:

### ԱՍՊԵՏ ՄԱՆԻԿԵԱՆ



կիւր»): Հիմնադրութենէն հինգ ամիս ետք անոր անդամներուն թիւը հասաւ 140ի՝ 181,500 լեւա դրամագլուխով: Դրամատան հիմնադրման երկրորդ տարին անդամներուն թիւը հասաւ 252ի՝ 474,700 լեւա դրամագլուխով, իսկ 1940ին համագործակցականը ունէր 407 անդամ՝ աւելի քան



## ՍՈՖԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾԱՆՈՒՆ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԸ ԳՐԻԳՈՐ ԶԱՔԱՐԵԱՆ

Սոֆիայի հայ համայնքին երկարամեայ դեպքերէն եւ մեծ գործարարներէն ու առեւտրականներէն եղած է Գրիգոր Զաքարեան: Ան ծնած է 15 Մայիս 1885ին, Ռուսէ: Նախակրթութիւնը ծննդավայրին ազգային վարժարանին մէջ ստանալէ ետք նետուեցաւ գործի ասպարէզ: Երէք եղբայրը՝ Խաչիկ յանձնակատարութեամբ կը զբաղէր եւ 1906ին մեկնեցաւ Վիեննա՝ գերմաներէն լեզուի ընտելանալու համար եւ վերադարձաւ 1907ին:

Երկու եղբայրները 1906էն սկսեալ միասնաբար սկսան գործել Նիքարթ Զաքարեան անունով: Այդ տարին անոնք մասնաճիւղ բացին Սոֆիայի մէջ եւ 1928ին ուրիշ ճիւղ մը ալ՝ Փլովտի մէջ: Իրենց ձեռներէցութեան եւ ուղղամտութեան շնորհիւ անոնք հետզհետէ ընդարձակեցին իրենց գործունէութիւնը եւ ստացան եւրոպական շատ մը առաջնակարգ տուներու ներկայացուցչութիւնը, որոնց գլխաւորներն էին՝ ա) Հայրիկի Քլիկկըր. գինուորական վրաններու արտադրութեան ընկերութիւն, կեդրոնը՝ Վիեննա, բ) Ֆերայնիկթե Վաքսուիսֆապիթեմ. սեղանի ծածկոցներ արտադրող ընկերութիւն, կեդրոնը՝ Փրակա, գ) Կիւնքըր Վակեր. մեյլանի արտադրութեան ընկերութիւն, կեդրոնը՝ Հանովըր, դ) Օրթման Նախֆոլկըր, եւ ե) Վեօլաուէր Քամկարնիսֆապիթե. բուրդէ մանածի ընկերութիւններ, որոնց կեդրոնը Վիեննա կը գտնուէր, զ) Քեմիշէ Ֆապիթե Եաքուուս. ներկի գործարան, կեդրոնը՝ Պերլին, է) Լ. եւ Ս. Հարտուր. չեխական մատիտի գործարան, ը) Փոսքոյանսքիօ. հիւսուածեղէնի գործարան Ռուսէի մէջ, հիմնուած՝ Հայրիկի Քլիկկըր գործատան նախաձեռնութեամբ, որուն յաջողութեան մէջ կարեւոր բաժին ունեցաւ Գրիգոր Զաքարեան:

Գրիգոր Զաքարեան եղբոր՝ Խաչիկի աշակցութեամբ 1929ին, Սոֆիայէն քիչ մը հեռու, Վոեմնա Ռամֆայի մէջ արուեստական կաշիի, կտորեղէնի, գործուածքներու ու գորգերու արտադրութեան գործարան բացաւ: Գործարանը իր յարակից կառոյցներով ունէր 5600 րու արտադրութեան գործարան բացաւ: Գործարանը իր յարակից կառոյցներով ունէր 5600 րու մեթր տարածութիւն, որուն 1300 մեթրին վրայ կառուցուած էր գործարանը, սարքաւորուած՝ գերմանական եւ չեխական արդիական մեքենաներով: Անոր արտադրութիւններէն էին վաթա (ղերմակներու համար), վաթալին (վերմակ գործներու համար), արուեստական բուրդ (հիւսուածեղէններու պատրաստութեան համար), ինչպէս նաեւ՝ զանազան տեսակի ներկերու ու իւղաներկի պատրաստութեան արտադրամասեր: Գործարանը 1930ին Փլովտիկի ցուցահանդէսին Պատուոյ վկայական ստացաւ, իսկ 1934ին՝ Ռուսի մետալ եւ վկայական: Իրեն կը պատկանէր պուլկարական բանակին հանդերձանը ապահովելու մենաշնորհը: Գրիգոր Զաքարեան բարեկամական մօտիկ կապեր ունէր պետական շրջանակներու հետ եւ երկար տարիներ ծառայած էր ազգային ու եկեղեցական մարմիններու մէջ:

# «ԱՆՄԱՀ ԲԱԳԻՆՆԵՐՆ...»

Շարունակում՝ 4րդ էջէն

զանգ եւ Ազատագրող մեր սուրբ պատմիչներուն եւ դպիրներուն գրչու-թիւնն ամէն: Ու կը զարմանաս: Չի բաւեր սակայն զարմանալ-հարկէ ականջ տալ քաղուած դասին: Ի՞նչ փոխանցեց 400 խիտ տողերով այս պատմավէ-պը, ըսաւ, որ պէտք է վստահինք մեր սեփական ուժերուն, չհաւատանք ուրիշին խոստումներուն, սիրենք զիրար, բարձր պահենք մեր ազգային արժանաւորութիւնը, տէրը ըլլանք մեր աւանդու-թեան, փարինք մեր ՀՈՂԻՆ, որ աղբիւրն է լոյսի եւ բարիքի: Հայրենի հողն է մեր ապակէնը, պաշտպանենք զայն մեր անկեղծ սիրով, եւ եթէ պէտք ըլ-

լայ՝ մեր արեամբ, որպէս-զի տիրանանք մեր անկա-խութեան: «Անմահ բագիններն հայոց»- հատոր մը, որ վե-րականգնած, վերստեղ-ծած է չորրորդ դարու հա-յոց պատմութիւնը՝ իր եր-գերով եւ վէրքերով: Արե-ւելահայերէնով գրուած, նորագոյն օրերու այս պատմիչին ստեղծագոր-ծած գիրքը կարգալու-բարխոր առաւելարար կ'երթայ Հայաստանի մեր ժողովուրդին, ընթերցող զանգուածին: Յարգանք ազգայնա-շունչ պատմավէպ յօրե-նած հեղինակին:

(Շար. 2 եւ վերջ)



bezdig\_mezdig@hotmail.com

## ՍԱԿԱՐԱՆ

Պէլյուսի սակարանից մէջ օտար դրամացիներու փակման սակագիները հետեւեալներն էին երէկ.

Սուրիական թղթուկի	28,55 - 28,80	լ.ն.
Քուէյթեան տիւար	5118,00 - 5143,00	լ.ն.
Յորդանանեան տիւար	2121,00 - 2131,00	լ.ն.
Պահրէյնեան տիւար	3985,00 - 4010,00	լ.ն.
Ա. Մ. Էմիրութեան տիւար	410,75 - 412,75	լ.ն.
Քաթարեան տիւար	413,75 - 415,75	լ.ն.
Սէուտական ոհալ	402,00 - 404,00	լ.ն.
Օմանեան ոհալ	3895,00 - 3920,00	լ.ն.
Եգիպտական կիւն	220,00 - 230,00	լ.ն.
Անգլիական սթերլին	2519,00 - 2529,00	լ.ն.
Չուիցերիական ֆրանք	1130,00 - 1135,00	լ.ն.
Թրքական լիրա	103,00 - 103,50	լ.ն.
Կիպրական փաունտ	2990,00 - 3015,00	լ.ն.
Ճափոնական հապար եէն	13,55 - 13,65	լ.ն.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1515,00	լ.ն.
Քանադական տոլար	1140,00 - 1145,00	լ.ն.
Աւստրալիական տոլար	1042,00 - 1047,00	լ.ն.
Եւրո	1755,00 - 1765,00	լ.ն.

● ՈՍԿԻ

Անգլիական մէկ ոսկի	145,000 - 150,000	լ.ն.
Իրանեան մէկ ոսկի	130,500 - 135,500	լ.ն.
Օսմանեան մէկ ոսկի	120,500 - 125,500	լ.ն.
Մէքսիկական փէսոս	695,000 - 715,000	լ.ն.
Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի	18,120,000 - 18,320,000	լ.ն.
Մէկ օնս ոսկի	376,40 - 376,90	\$
Մէկ օնս արծաթ	5,01 - 5,03	\$

● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.

Եւրո	1.1643 - 1.1647
Քանադական տոլար	1.3201 - 1.3206
Ճուլիցերիական ֆրանք	1.3331 - 1.3336
Ջափոնական եէն	110.11 - 110.16
Մէկ սթերլին	1.6718 - 1.6722

Մէկ փոլար 585 դրամ

● ՍՈՒԽՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ

Գիւնի Ա. 6շդում	Գիւնի Բ. 6շդում
Ա. կարգ 4,19	4,28
Բ. կարգ 4,33	4,33

ԼՈՒՍԱՅԱՓՈՒ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ ՀԵՌ. 01-252852

## ☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

**ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ)**  
Աշխատանքի վայրին մէջ մթնոլորտը շատ հանելի եւ օգտաշատ պիտի ըլլայ: Պիտի սերտանայ ձեր բարեկամութիւնը եւ պիտի ունենայ նոր բարեկամներ:

**ՅՈՒՆ (21 Ապրիլէն 21 Մայիս)**  
Ձեր օրը շատ հանելի պիտի անցնի ձեր գաւակներուն եւ ընտանեկան պարագաներուն հետ: Միծաղ եւ քաղցրութիւն ամբողջութեամբ պիտի գուարթացնեն ձեր օրը:

**ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս)**  
Ձուր տեղ ձեր գլուխը մի՛ յոգնեցնէք անիմաստ հարցերով: Անոնք չեն արժէք ուշադրութեան, ուրեմն հանգիստ սրտով շարունակեցէք ձեր օրը:

**ԽՆՑԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)**  
Ձեր գործին բերումով պիտի կատարէք նմարողութիւն մը, որուն ընթացքին պիտի տեսնէք նոր քաղաքներ եւ նոր դէմքեր, որոնք հաճոյք պիտի պատճառեն ձեզի:

**ԱՌԻԻԾ (24 Յուլիսէն 23 Օգոստոս)**  
Եթէ կ'աշխատիք շինարարական մարզին մէջ, շատ լաւ գործի մը պիտի ձեռնարկէք: Օրը ունի դրամական եւ այլ տեսակի շահեր, յաջողութիւններ:

**ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)**  
Ձեր ուզեր օգտուիլ ամէն բանէ, չէք ուզեր անձամբ խնդրել, բայց կ'ուզէք, որ ուրիշ մը խնդրէ ձեր փոխարէն: Ամչկոտ ու վախկոտ մի՛ ըլլաք: Օրը յաջող է:

**ԿՇԻՌՔ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)**  
Այսօր բարձր տրամադրութիւն պիտի ունենայ, ձեզի հետ պիտի ուրախացնէք նաեւ ձեր շրջապատը: Բնացէք միշտ նոյն տրամադրութեամբ, լաւատեսութեամբ:

**ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)**  
Կը կարծէք, որ ոմանք ձեր ետեւէն դաւեր կը լա-րեն, բայց ասիկա միայն կասկած է: Բնաւ մի՛ մտա-հողուիք. հաւանաբար ատիկա հանելի անակնկալ մը ըլլայ, որովհետեւ ձեր տարեկանը մօտեցած է:

**ԱՂԵՂՆԱՌՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)**  
Եթէ կ'ուզէք փոփոխութիւն մը ներմուծել ձեր առօրեայ աշխատանքին մէջ, ուշադիր եղէք, որ սխալ բայլ մը չառնէք: Օրը կը պահանջէ խոհեմութիւն:

**ԱՅԾԵՂՁԻՒՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)**  
Եթէ ուսանող եք կամ մտաւորական աշխատանք կը տանիք, հարկ է, որ լաւ սերտէք ձեր դասերը. քաղ-ւածք մը ըրէք: Հիմա ծուլանալու ժամանակը չէ: Շատ լաւ, բայց մի՛ մոռնաք նաեւ քիչ մը ժամանակ տրա-մադրել գուարանալու:

**ԾՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարէն 19 Փետրուար)**  
Օրը բախտաբեր է. պիտի ունենայ դրամական ան-սպասելի շահ մը: Ուրեմն եղէք պատրաստ՝ ընկերներով գուարանալու եւ նոյն ատեն աշխատելու եռանդով:

**ՉՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)**  
Ամուսնական կամ բարեկամական կեանքի մէջ պի-տի ստեղծուի բիրտիմացութիւն մը՝ անհամ կացու-թեան մը դիմաց դնելով ձեզ: Ձեզի կը մնայ ըլլալ խո-հեմ, փարատել անհասկացողութիւնը եւ անկեղծու-թեամբ ստեղծել սիրալիր մթնոլորտ:

# ՕՐԱՏԵՏՐ

ՓԱՌԱՍՏԵՐ / ՅՈՒՅԱՀԱՆԿԵՍ / ԶԲՕՍԱԸՐՉՈՒԹԻՒՆ

## ՖՐԷՅԻՒՒ ՓԱՌԱՍՏԵՐԻՆ ԲԱՅՈՒՄԸ՝ ԶՈՅԳ ԹԱՏԵՐԱԽԱՂՈՎ

Մշակութային իրադարձութիւններու այլապատկերի մատուցող Ֆրէյ-իսի փառատօնը այ-սօր կը կատարէ բա-ցումը իր չորրորդ հաւն գրուանին: Մինչեւ 6 Նոյեմբեր երկարող երկշաբա-թայ այս փառատօ-նը, որուն ձեռնարկ-ները տեղի պիտի ունենան Ֆրէյի գիւղին տարբեր վայրերուն, ներառ-եալ անոր նշանա-ւոր մետաքսի գոր-ծարանին մէջ, կը միտի մշակութային աշխուժութիւնի հա-ղորդել գիւղին եւ շրջանին, ինչպէս նաեւ նպատել նո-րայայտ տաղանդ-ներու արտայայ-տութեան կարելիու-թիւններուն:

Ֆրէյիսի փառա-տօնին յայտագիրը ներկայանալու էր 1948-ին, Ֆրանսական Մշակութային Կեդրոն, մինչեւ 31 Հոկտեմբեր:

Ֆրէյիսի փառա-տօնին երկրորդ բա-ցումը կը կատարուի 20:30ին, «Էլ Մատին» թատերասրահ, մինչեւ 24 Հոկտեմբեր:

## ԱՅՍՕՐ

- Պարային ելոյթ՝ «Վույաժ տ'էօն բոր», ժամը 20:30ին, «Էլ Մատին» թատերասրահ, մինչեւ 24 Հոկտեմբեր:
- Թատրոն՝ «Պ'Ինքիզար Կոսո», ժամը 20:30ին, Պէլյուս թատերասրահ, մինչեւ 24 Հոկտեմբեր:
- Ջետիման արուեստի ցուցահանդէս՝ «Ըբրոս բանքիւնը», ժամը Մաքքի Պաշոյի գործերը, «Ֆրենկ» ցուցասրահ, մինչեւ 23 Նոյեմբեր:
- Լուսանկարչական ցուցահանդէս՝ «Փուէն տը Վի», Նապիլ Ղանտուրի գործերը, «Ռոշան» ցու-ցասրահ, մինչեւ 4 Նոյեմբեր:
- Լուսանկարչական ցուցահանդէս՝ «Փալեսթին աւան 1948», Ֆրանսական Մշակութային Կեդրոն, մինչեւ 31 Հոկտեմբեր:
- Լուսանկարչական ցուցահանդէս՝ Ալեքսանտր Մաքսիմովիչի Զիլովի գործերը, Ռուսական Մշա-կութային Կեդրոն, մինչեւ 27 Հոկտեմբեր:

**ՕՐԵՆԵՐՈՅԹ**

ՉՈՐԵՔԸԱԲԹԻ,  
22 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2003

ՊԵՅՐՈՒԹ  
ԱՐԵՒՈՏ

ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ  
ՅԵՐԵԿ՝ 30°C

ԳԻՇԵՐ՝ 23°C

ԿՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝  
50%

**ՏՕՆ**

**Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ**

Գիտ Խաչի եւ Ս. Նշան Մայր եկեղեցւոյ ան-ւանակութեան տօնին առթիւ, հանդիսաւոր Ս. պատարագ պիտի մատուցուի Կիրակի, 26 Նոյ-տեմբեր 2003ին:

Պիտի պատարագ եւ բարոզ՝  
ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ  
(Առաջնորդ Լիբանանի Եպիսկոպոս)

Սկիզբ ժամերգութեան ժամը 8:00ին  
Ս. պատարագ ժամը 9:30ին  
Զարոզ ժամը 11:00ին  
Մատուցողները ժամը 12:00ին

Շաբաթ, 25 Նոյեմբեր 2003ի կէսօրը ետք ժա-մը 7:00ին պիտի կատարուի հսկումի արարողու-թիւն:

Կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդը՝ ներկայ ըլլալու եկեղեցւոյ անուանակութեան հո-գեպարար եւ հանդիսաւոր արարողութեան:

ԹԱՂԱՎԱՆՈՒԹԻՒՆ  
Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ

## ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5571 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱՋԱՐԵԱՆ

1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										

ՀՈՐԻՉՈՒԱԿԱՆ	ՈՒՂԱՆԱՅԵԱՑ
1. Ալեքսանդր Մոսկով-եանի գրչանունը:	1. Գիշատիչ թռչուն - Մառախուլութիւն:
2. Փորձանք - Կտաւ:	2. Փափաք - Իզական անուն:
3. Դրկից տառեր - Սամարիա քաղաքին հիմնադիրը - Ալբուրե-նէն:	3. Ալբուրենէն - Չորանալ:
4. Ամուսնացած կին:	4. Մորթի ծակախօք - Որովայն:
5. Առտին կամ ներսի:	5. Մանրոջիլ - Ֆրանսա-կան քաղաք:
6. Չայնանիչ - Կարծր ուռեցք:	6. Յարատեւ նոր - Տա-ռի մը անունը:
7. Արթուն - Գամ:	7. Փոքրացնող մասնիկ:
8. Արական անուն - Սե-փականութիւն:	8. Բոտր - Մայր թաղուհի:
9. Ատուած - Կտոր:	9. Լեղի - Կաղկանձէր:
10. Ասիական ոստան:	10. Եւրոպական ընդյա-տակեայ կազմակերպու-թիւն մը - Մոնոթորի - Լե-գուով մը՝ այդ՝:

**ԹԻՒ 5570**

**ԽԱՉԲԱՌԻՆ**

**ԼՈՒԹՈՒՄԸ**

1	Շ	Ի	Ր	Վ	Ա	Ն	Ջ	Ա	Գ	Է
2	Ա	Ղ	Ե	Տ	Ո	Ն	Լ	Ա	Թ	
3	Հ	Զ	Ա	Մ	Ր	Ի	Ռ	Ա		
4	Է	Ս	Ա	Ն	Ա	Կ	Ի	Ն		
5	Ե	Ե	Ր	Ք	Ի	Ն	Ս	Ա	Ա	
6	Ս	Ի	Կ	Ո	Շ	Կ	Ո	Ռ		
7	Ս	Ք	Ա	Փ	Ք	Ո	Ռ	Ն		
8	Պ	Ե	Ն	Ո	Ն	Ա	Ի	Ն		
9	Ա	Ր	Ա	Ր	Չ	Հ	Ա	Տ		
10	Ս	Լ	Ա	Մ	Ա	Ն	Ի	Լ	Ա	

**ԱԶԳԱԿ** 50 ՏԱՐԻ ԱՌԱՋ 22 Հոկտեմբեր 1953

**ՀԱՅ ԿԵԱՆՔԸ ԱՒՍՏՐԱԼԻՈՅ ՄԷՋ**

Մէկվերնի Հայկական Միութիւնը 1953 Սեպտեմբեր 25ին քաղաքի Մէտոնիք Հոլին մէջ ընդհանուր ժո-ղով գումարելով մէկ տարուան շրջանը լրացուցած անդամներուն տեղ նորեր ընտրեց, գաղտնի քը-լեարկութեամբ:

Քուէարկութեան ետք վարչու-թեան ատենակցութիւնը կազմուեց իսկապէս 4. Ս. Կայծքար, հրաւիրեց Միութեան ատենակցի-կարգալու տարեկան ընդհանուր տե-ղեկագիրը. յիշեալը ներկայանալու մանրամասնեց միութեան ունեցած գործունէութիւնը ու իր նիւթական վիճակը, լուսաբանութեան կարօտ հարցումներ եղան ատենակցի-կարգալու, որոնց ան պատասխանեց որոշ բա-ցատրութիւններով:



Ապա խօսք առաւ Կ. Կայծքար. ան խանդավառութեամբ խօսեցաւ Մեր-ծարեւելիքի եւ Եւրոպայի մէջ իր այ-ցելած հայկական հաստատութիւն-ներուն եւ միութեան մասին. յիշեա-լը մէկ առ մէկ թուեց մեր ազգակից-ներուն տարած աշխատանքները եւ հրաւիրեց քաղաքի հայութիւնը, որ թէ՛ նիւթապէս եւ թէ՛ բարոյապէս գօ-րավիզ հանդիսանայ Հայկական Միութեան, որպէսզի կարելի ըլլայ:

Սիւնիի հայութիւնը Սեպտեմբեր 5ի իր ընդհանուր ժողովին, որուն ներկայ եղան նաեւ Մէկվերնի Հայկա-կան Միութեան ատենակցութիւնը, Աւստրալիա հրաւիրել հայ եկեղեցա-կան մը իրրեւ առջնորդ. անհրա-ժեշտ դիմումներ պիտի ըլլան, եւ եթէ չարագործ ձեռք մը չկայցնա-րէ այս կարեւոր ձեռնարկը, Աւստրա-լիա հայութիւնը պիտի ունենայ իր եկեղեցին ու եկեղեցականը, որուն ալընքան կարիք ունի:

**ԱՅՍՕՐ 22 ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ**

1975- Եւրոպական Յեղասպանութեան Արդարութեան Մարտիկներու կողմէ Կինեմայի թուրք դեսպանին ահաբեկումով կը սկսի հայ զինեալ պայքարի նորագոյն փուլը:

# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Տ



## ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՖՈՒԹՊՈՒԼ

Լիբանանի ֆուտբոլի ֆեդերասիոնը վաերացուց Լիբանանի Բ. դասակարգի ախոյանությունները 2003-2004 եղանակի առաջին հանգրուանի մրցումները, որոնք տեղի ունեցան անցեալ շաբաթավերջին:

Չորս կազմեր՝ Ռասիդ, Իսլահ Պրոֆ Շիմալի, Նահա-տա Պար էլիաս եւ Ռայան յաջողեցան արձանագրել եղանակի իրենց առաջին յաղթանակը:

Թէեւ բազմաթիւ մարզիկներ դեղին քարտեր ստացան, սակայն վեց մրցումներն ալ վերջ գտան, ոչ իսկ մէկ մարզիկի մը դաշտէն վտարուումով:

Պրոֆի մարզիկներէն Նազիհ Թայ, որ ֆեդերասիոնին մօտ արձանագրուած է իբրեւ պատասխանատու երկու ամիսով կախակալուեցաւ, իր ոչ մարզավայել կեցուածքին համար:

Ֆեդերասիոնը հրապարակեց նաեւ Ա. դասակարգի 3րդ հանգրուանի, ինչպէս նաեւ Բ. դասակարգի 2րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը, որոնք տեղի պիտի ունենան այս շաբաթավերջին:

2. Մ. Ը. Մ., որ եղանակի իր առաջին երկու մրցումները կատարեց օտար դաշտի վրայ (Մայտա), առաջին անգամ ըլլալով իր պաշտօնական մրցումը պիտի կատարէ Պուրճ Լամուտի Գազաբայետարանի դաշտին մէջ, հիւրընկալելով՝ Սաֆան: Մրցումը տեղի պիտի ունենայ Շաբաթ, 25 Հոկտեմբեր, կէսօրէ ետք ժամը 4:00ին:

Ստորեւ Ա. դասակարգի 3րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը:

ՇԱԲԱԹ, 25 ՀՈԿՏԵՄԲԵՐ	ԺԱՄ	ԴԱՇՏ
Ահտ - Սաժէս	4:00	Ահտ
Թատամոն Սուր - Հ. Մ. Մ.	4:00	Սուր
Մ. Ը. Մ. - Սաֆա	4:00	Պուրճ Լամուտ
Մապարա - Նըժմէ	7:00	Մայտա
Շապապ Սահել - Անսար	8:30	Մարզական Աւան

ԵՐԵՎԱՆԻ Բ. դասակարգի 28 ՀՈԿՏԵՄԲԵՐ  
Օլիմպիք - Սալամ 8:30 Պէյրուք

ՍՏՈՐԵՒԻ Բ. դասակարգի առաջին հանգրուանի մրցումներուն արդիւնքները:

Ռիատա Ռալ Ատապ - Մահապապ Թրիփոլի	0-0
Պրոֆ - Ռայան	1-2
Նահա Պար էլիաս - Թատամոն Նապաթիէ	3-0
Իթթիմահի - Շապապ Թրիփոլի	1-0
Նըժմէ Սահրա - Իսլահ Պրոֆ Շիմալի	2-3
Հըրրիէ Մաժտալ Ալնահար - Ռասիդ	1-2

●ՍՏՈՐԵՒԻ 2րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը:

ՈՒՐԱՎԱԹ, 24 ՀՈԿՏԵՄԲԵՐ	ԺԱՄ	ԴԱՇՏ
Ախա Արէլ - Ռայան	4:00	Պահմատուն
Հըրրիէ - Իսլահ	4:00	Խիարա
Ռասիդ - Շապապ Թրիփոլի	4:00	Ժուհիէ
ՇԱԲԱԹ, 25 ՀՈԿՏԵՄԲԵՐ		
Պրոֆ - Նըժմէ Սահրա	4:00	Սաֆա
Նահա - Իթթիմահի	4:00	Խիարա
ԿԻՐԱԿԻ, 26 ՀՈԿՏԵՄԲԵՐ		
Մահապապ - Թատամոն Նապաթիէ	3:00	Թրիփոլի

## «ՉԷՄՓԻԸՆՉ ԼԻԿ»

### ԼՈՔՈՍՈՒԹԻ ՄՈՍԿՈՒԱ - ԻՆԹԵՐ ՄԻԼԱՆ՝

3-0

«Չէմփիընչ Լիկ»ի գծով երէկ տեղի ունեցան ութ ճակատումներ, որոնք տուին հետեւեալ արդիւնքները:

●Ա. ԽՄԲԱԿ Անտրլիէթ (Պելմիքա) - Սելիք (Սկովտիա) 1-0  
Լիոն (Ֆրանսա) - Պայէրն Միւնիխ (Գերմանիա) 1-1

(Սպանիա) - Մոնաքո (Ֆրանսա) 1-0  
Ա.Կ. Աթէնք (Յունաստան) - Փ. Ս. Վ. Ալնտոն-վրն (Հոլանտա) 0-1

●Դ. ԽՄԲԱԿ Կալաթարա (Թուրքիա) - Օլիմպիկոս (Յունաստան) 1-0  
Եուրոպէոս (Իտալիա) - Ռեալ Մոսկովա (Սպանիա) 4-2

●ԱՅՍՈՐ Ե. ԽՄԲԱԿ Շթուպկարթ (Գերմանիա) - Փանաթինայքոս (Յունաստան)  
Ռէյնըրգ (Սկովտիա) - Մանչեսթըր Եունայթեդ (Անգլիա) 2-1

(Անգլիա)  
Չ. ԽՄԲԱԿ Մարսէլ (Ֆրանսա) - Փորթո (Փորթուգալ)  
Ռեալ Մատրիտ (Սպանիա) - Փարթիզան Պելկըրատ (Սերպիա)

●Ե. ԽՄԲԱԿ Չելսի (Անգլիա) - Լացիո Ռոմա (Իտալիա)  
Սիարթա Փրակա (Չեխիա) - Պեշիքթաշ (Թուրքիա)

●Ը. ԽՄԲԱԿ Այաքս Ամսթերտամ (Հոլանտա) - Սելթա Վիկո (Սպանիա)  
Ա. Սէ. Միլան (Իտալիա) - Յ. Բ. Պրիմ (Պելմիքա)

## ԼՈՒՐԵՐ՝ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՖՈՒԹՊՈՒԼԷՆ

●ՆԻԻԲԻՍԸԼԻ պատասխանատուները շաբաթակից յայտնեցին, որ իրենց ակումբին մաս կազմող կալէսցի միջազգային յառաջադաս Քրէյկ Պելամի իր սպարէզին ընթացքին վեցերորդ անգամ ըլլալով ծուռկի վիրաբուժութեան պիտի ենթարկուի:



Քրէյկ Պելամի, որ ֆաուլի կ'ենթարկուի մարզիկի մը կողմէ

24 տարեկան Պելամի վիրաբուժութեան պիտի ենթարկուի Միացեալ Նահանգներու մէջ, նոյն այն բժիշկին՝ Ռիչըրտ Սթիտ-մընէն, որ փրկեց անոր խմբակիցին՝ էլն Շիրըրի ֆուտբոլիստի ասպարէզը:

Պելամի առաջին անգամ ըլլալով ծուռկի հարցումի մրցաշարին: Պէլմի իտալացի յետասպահ՝ Լորենցո Ամորուսո, որ ամբողջ ընթացքին Ռէյնըրգէն փոխանցուեցաւ Պէլմիին, այսօր պիտի ենթարկուի ծուռկի վիրաբուժութեան:

Անոր կատարելիք վիրաբուժութեան անդրադառնալով, Պէլմիին պատասխանատուները ոչինչ յայտնեցին, թէ ան որքանով հեռու պիտի մնայ ֆուտբոլի կանաչ դաշտերէն, սակայն անոնք կը մնան մտահոգ, որովհետեւ արդէն իսկ խումբէն բացակայ են՝ Քրէյկ Շիրըր եւ Մարքուս Պապըլ (վիրաբուժ):

●ԹՈՒԹԵՆԸԱՄԻ յառաջադաս Ֆրետի Գանուսի ինքզինք որոշ չափով մը ուրախ գտաւ, որ միայն երկու ամիս պիտի բացակայի դաշտերէն, նկատի ունենալով որ այն մտավախութիւնը կար, որ ան առնուազն վեց ամիս բացակայի դաշտերէն:

26 տարեկան ֆրանսացի, որ անցեալ շաբաթավերջին, Լայպըր Սիթիի դէմ տեղի ունեցած մրցումին նշանակեց իր կազմին յաղթանակի կողմ (2-1), Փանուի ենթարկուելէ ետք Մուզգի Իզզէթէն, կոտորեց իր ոտքը:

Ֆանուսի գործավարը՝ Ուլի Մաքայ, Անգլիոյ ֆուտբոլի ֆեդերասիոնին բողոքելով ըսաւ, որ անիկա պէտք է որ քիչ մը կարգապահութեան կանչէ Իզզէթէն:

Ֆեդերասիոնին մէկ պատասխանատուն ըսաւ սակայն, որ այդ ուղղութեամբ ոչինչ կրնայ յայտարարել, մինչեւ որ չլսէ իրաւաբարին գեկուցումը:

## ՔՐՈՒՅՖ ԴԱՐՉԵԱ՞Լ ԴԵՊԻ ՊԱՐՍԱ

Սպանիոյ ֆուտբոլի ախոյանութեան 2003-2004 եղանակին, Պարսելոնայի արձանագրած ախոյանութիւնը, վստահաբար, որ այդքան ալ գոհ չձգեցին ակումբին նախագահը՝ Խուան Լափորթան, որ գրեթէ կորսնցուցած է իր հաւատքը հոլանտացի մարզիչ՝ Ֆրանք Ռիքարտի հանդէպ եւ այնպէս կը թուի, որ ան մտադիր է ձեռք ձգելու Պարսայի նախկին մարզիչ Եոհան Բրույֆը:



Քրույֆ

Քրույֆ իբրեւ մարզիչ եւ իբրեւ մարզիչ լազողեցաւ բաւական լաւ արդիւնքներ արձանագրել խումբին հետ, չորս անգամ շահելով Սպանիոյ ախոյանութիւնը, իսկ մէկ անգամ ալ՝ Եւրոպայի բաժակը (1992):

Թէեւ 1996ին, Քրույֆ պաշտօնապարկուեցաւ, սակայն ան կը մնայ Լափորթայի մօտ մէկ բարեկամը: Նշենք, թէ Լափորթա Պարսելոնայի նախագահ նշանակուեցաւ անցեալ Յունիսիսին, խոստանալով խումբին վերադարձնել իր երբեմնի փառքի օրերը:

Անցեալ Շաբաթ օր սակայն, Պարսելոնա եղանակի իր երկրորդ պարտութիւնը կրելով, ընդհանուր դասաւորման մէջ նահանջեց 11րդ դիրք, տար կէտով ետ մնալով պարագլուխ դիրքը գրաւող Վալենսիայէն, որ ունի՝ 19 կէտ:

Հակառակ Քրույֆի անդրադառնալով, որ Լափորթա կ'ըսէ, որ երբեք մտադիր չէ պաշտօնապարկել Ռիքարտը, որ մարզիչի սպարէզին մէջ քիչ մը անփորձ կը նկատուի: 1998էն 2000 ան Հոլանտայի ֆուտբոլի ազգային խումբին մարզիչն էր, իսկ 2001էն 2002՝ Սիարթա Ռոթտերտամի մարզիչը (Հոլանտա):

Այդ իսկ պատճառով, ան կ'ուզէ, որ Քրույֆ, իր ունեցած փորձառութեամբ օժանդակէ եւ որոշ ցուցումներ տայ Ռիքարտի, որ բաւական ծանօթ ըլլալով սպանական ֆուտբոլին կրնայ մեծապէս նպաստել, որ Պարսելոնա յառաջիկային արձանագրէ:

●ՊԱՐՍԵԼՈՆԱՅԻ հոլանտացի յառաջապահ Փարթիք Քրույֆը երէկ մերժեց ընդունիլ շրջան ընող այն տարաձայնութիւնները, ըստ որոնց՝ ինք մտադիր է իր կազմը լքելով փոխանցուիլ Նիքէսըի:

Հոլանտացի, որ իր այդ յայտարարութիւնը կատարեց, «Նու Քամփ»ի դաշտէն դուրս գտնուող թղթակիցներուն, վեցերորդ եղանակն ըլլալով մաս կը կապէ Պարսելոնայի:

Սախորդ հինգ եղանակներուն, ան իւրաքանչիւրին ընթացքին նշանակեց շուրջ 15 կոլ, սակայն այս եղանակին ան տակաւին չյաջողեցաւ Սպանիոյ ֆուտբոլի ախոյանութեան մրցումներուն կոլ մը նշանակել:

Պարսելոնա, որ ցարդ արձանագրած է երկու յաղթանակ, երեք հաւասարութիւն եւ կրած երկու պարտութիւն, շաբաթավերջին, Տրոյսի մրցումներուն հիւրը պիտի ըլլայ նախաՎերջին դիրքը գրաւող Մայորքայի:



Քրույֆը

### ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

## «ՈՉ ՄԵԿ ԱՆԳՈՐԾ ԾՐՋԱՆԱԲԱՐՏ» ԱՐՁԱԿԻՆ

1.- Այսօր **POLYGLOT COLLEGE**ի **EMPLOYMENT DEPARTMENT**ը իր տեղը ունեցաւ 244 ընկերութիւններու, դրամատուներու, գործատուներու **Recruiting Dept.**ի պաշտօնէութեան ցանկին մէջ:

2.- 46 անգործ շրջանաւարտներ ստանանեցին իրենց նոր պաշտօնները Լիբանանի եւ Ծոցի երկիրներու մէջ:

3.- Իրենց դասերուն զուգահեռ քուէճիս 28 ուսանողներուն ապահովուեցաւ կիսամսայ աշխատանք:

4.- Մանկավարժութեան մեր ԲՈԼՈՐ շրջանաւարտները գործի վրայ են, ոմանք Լիբանանի ամենախառաջադէմ դպրոցներու մէջ:

5.- Նոյնմբեր 1էն սկսեալ պիտի ընդունինք դիմումներ նաեւ այլ վարժարաններէն շրջանաւարտ կարիքաւոր ուսանողներու:

ԾԱՆՕԹ.- **POLYGLOT EMPLOYMENT DEPT.**ը **ՈՉ ՄԵԿ ՆԻԻԹԱԿԱՆ ՊԱՐՏԱԴՐԱՆՔ** կը դնէ, ըլլա՛յ պաշտօնեային, ըլլա՛յ գործատիրոջ վրայ:

### ՓՈԼԻԿԼՕԹ ԲՈԼԵՃ

Իր պայքարը պիտի շարունակէ **ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹԵԱՆ** դէմ, որովհետեւ ան նուաճած է.

Ա.- **ՄԱԿԱՐԴԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱԻԵՐԸ**

1.- Վկայ պետական քննութեան մէջ քուէճիս արձանագրած բացառիկ յաջողութիւնը, համալիբանանեան չափանիշով:

2.- Վկայ իրերայաջորդ կրթական նախարարներու վկայութիւնները:

3.- Վկայ քուէճիս շրջանաւարտներու պերճախօս վկայութիւնները:

4.- Վկայ այլ վարժարաններէ **ՏԱՍՆԵԱԿՆԵՐՈՎ ՆՈՐ ՌԻՍԱՆՈՂՆԵՐՈՒ ՓՈՆԱՆՅԱԳՐԵՐԸ**, որուն դիմաց **ՈՉ ՄԵԿ ՓՈՆԱՆՅԱԳՐԻ ՊԱՍՆՈՂ՝** քուէճիս ուսանողներէն:

Բ.- **ՓՈԼԻԿԼՕԹ ԲՈԼԵՃ** նուաճած է ԹԻԻԻ մարտահրաւէրը

Կարենայ ընդունելու իսամար յաւելեալ 75 աշակերտներ եւս, քուէճիս հարկադրուած եղաւ ընդարձակելու իր տարածութիւնը երրորդ յարկով մը:

**ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ**

**22 Հոկտեմբեր 2003**

## ՀԵՐԹԱ ՊԵՐԼԻՆԻ ՄԱՐԶԻՉԻՆ ՊԱՇՏՕՆԸ ՎՏԱՆԳՈՒԱԾ

Հերթա Պերլինի հոլանտացի 49 տարեկան մարզիչ՝ Հուկ Սթիւրնս, իր պաշտօնին վրայ մնալու համար, անպայման պէտք է յաջորդ երկու մրցումներուն լաւ արդիւնք արձանագրէ, յայտնեցին ակումբին պատասխանատուները, երէկ:

Անոր կազմը, որ Պուրսելոնայի միակ խումբն ըլլալով ցարդ ոչ իսկ մէկ յաղթանակ արձանագրած է, այժմ կը գրաւէ ընդհանուր դասաւորման վերջին դիրքը: Անիկա արձանագրած է հինգ հաւասարութիւն եւ կրած՝ չորս պարտութիւն:

«Խոյնհանութեան յաջորդ մրցաշարին, անոր կատարելիք երկու մրցումները, պիտի ըլլան անոր ճակատագիրը վճռողը: Որոշեցինք գործակցիլ անոր հետ, որովհետեւ վստահ ենք, որ ան լաւապէս պիտի կատարէ իր պաշտօնը», ըսաւ Հերթայի նախագահ՝ Տիեթր Զէօնէս:

Նշենք, թէ Սթիւրնս, Հերթա Պերլինի մարզիչ նշանակուեցաւ Յունիս 2002ին, փոխանցուելով Շալթէնէն:

## ԻՐԱՔԵԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՉԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵՑ ՔԱՐՊԱԼԱՅԻ ՄԵՋ

Իրաքի ոստիկանությունը՝ դաշնակից ուժերու օժանդակությամբ, քանի որ հոգի ենթակայից Քարպայայի մէջ, հաղորդեցին ամերիկեան ուժերու աղբիւրներ:

Արմատական կրօնապետ Մոքթաա Սատրի շարժումը յայտարարեց, որ կայանաւորները Սատրի հետեւորդներ են: Շարժումին մէկ բան-բերը ըսաւ, որ ոստիկաններ բնակարաններ ներխուժելով ենթակայեցին հետեւորդները, որոնք ենթադրաբար մասնակցած են անցեալ շաբթուան մէջ տեղի ունեցած բախումներուն: Չերբակալուածներուն մեծ մասը Քարպայայի մզկիթներէն մէկը ապաստանած էր: Ոստիկանութիւնն ու օտար ուժերը մզկիթը պաշարելով պահանջած են որ անմատուր ըլլան:

Պաղտատի մէջ ալ, ամերիկացի պինտրներ օդը կրակեցին, ցրուելու համար ցուցարարներ, որոնք կը բողոքէին կարգ մը նախարարութիւններու մուտքի հսկող շուններուն ներկայութեան դէմ: Շունները «կը հոտուրտան» ներս մտնող բոլոր պաշտօնեաները պահուած ումբեր յայտնաբերելու համար: Հարցը ծայր տուաւ, երբ կին պաշտօնեայ մը մերժեց, որ շունը մօտենայ իրեն, որովհետեւ պայուսակին մէջ Քորան կար: Չինտր մը մօտենալով Քորանը գետին նետած է՝ բողոքի ելոյթ մը հրահրելով:

Ֆայլումայի մէջ ամերիկացի երկու պինտրներ վիրաւորուեցան, երբ ական մը պայթեցաւ իրենց ինքնաշարժին մօտ:

●ՌՈՒՄԻԱ երէկ վերահաստատեց, որ մտադիր չէ նուիրատուութիւններ կատարելու Իրաքի վերակառուցման համար, բայց ցեւայնպէս պատրաստ է միլիոնաւոր տոլարի ներդրումներ կատարելու:

(ԱՅՓ)

## ԿԻԼ - ՓԱՓԱՆՏՐԵՈՒ ԼԱՅՆԱԾԻՐ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԱԹԵՆՔԻ ՄԵՋ

Աթէնք, 21 (ԱՅՓ).- Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ապտիլլա Կիլ Երեքշաբթի օր լայնածիր բանակցութիւններ ունեցած է իր յոյն պաշտօնակիցին՝ ձորճ Փափանտրէտի հետ, որ Կիլի նման յայտնած է, թէ երկու մրցակիցներուն միջեւ յարաբերութիւնները բարելաւուած են:

Աթէնքի օդակայանին մէջ ընդունելով Կիլը, Փափանտրէտը ըսած է, թէ Յունաստան եւ Թուրքիա կարեւոր քայլեր առած են «յարաբերութեանց բնականոնացման համար» քայլ առ քայլ թափ տալով փոխադարձ վստահութեանը:

Կիլ, որ երկօրեայ այցելութեան մը համար Աթէնք կը գտնուէր, աւելցուցած է, որ երկու երկիրները մեծ յառաջդիմութիւն արձանագրած են 2000էն ի վեր:

Թուրքիայէն մեկնելէ առաջ ան ըսած է, որ երկու երկիրներուն միջեւ կապերու ամրապնդումը ո՛չ միայն երկու երկիրներու ժողովուրդներուն համար օգտակար պիտի ըլլայ, այլ նաեւ անհկաշըջանին մէջ ապահովութեան եւ կայունութեան պիտի նպաստէ:



Նպաստէ:

Փափանտրէտը յայտնած է, թէ բանակցութիւնները պիտի կեդրոնանան երկարատեւ ի վեր գոյութիւն ունեցող բանակցութեան վրայ՝ եզակական ծովուն մէջ իրենց սահմանները սահմանադրելու հարցերուն առնչութեամբ: Երկու անձնակազմներուն երբ պիտի արձարծեն նաեւ յառաջիկայ տարուան Աթէնքի Ողիմպիական խաղերուն ապահովութեան

հարցը եւ Իրաքի ու Պալեստինայի շրջանին մէջ տիրող կացութիւնները:

Կիլ, որ Չորեքշաբթի օր (այսօր) տեսակցութիւն մը պիտի ունենայ վարչապետ Քոսթաս Սիմիթիսի հետ, ըսած է, որ տնտեսական գործակցութիւնը նոյնպէս օրակարգի կարեւոր նիւթերէն պիտի ըլլայ, նախատեսելով, որ երկկողմանի առեւտուրը մօտ ատենէն մէկ միլիար տոլարի պիտի հասնի:

**ՅՈՐԴԱՆԱՆ**

### ԱՅՍՕՐ՝ ԿԱՐՉԱՊԵՏԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

ԱՄՄԱՆ, 21 (ԱՅՓ).- Յորդանանի վարչապետ Ալի Ապու Ռադէպ Չորեքշաբթի օր (այսօր) հրաժարականը պիտի ներկայացնէ Ապտալա Բ. Թազաուրին, որ վարչապետ պիտի նշանակէ Թազաուրական պալատի վարչակազմի պատասխանատուն՝ Ֆայսալ Ֆայէզը, յայտնեց տեղեկատուութեան նախարար Նապիլ Շարիֆ:

Շարիֆ ըսաւ, որ Ֆայէզի նշանակումը գրեթէ հաստատ կը թուի: Կը նախատեսուի, որ Ֆայէզ կազմէ առաւելագոյնը քսան նախարարներէ բաղկացած կառավարութիւն մը: Կը նախատեսուի նաեւ, որ տեղեկատուութեան նախարարութիւն չունենայ նոր դահլիճը:

## ՊԱՆՔՈՔԻ ՄԵՋ ԱՓԷՔԻ ՎԵՀԱԺՈՂՈՎԸ ԱԻԱՐՏԵՑԱԻ ՈՉ ՇԱՏ ՄԵԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

Խաղաղականի ծովեզերայէրկիրներու (ԱՓԷՔ) ղեկավարները երէկ Պանքոքի մէջ խոստացած են «առաքելական» կազմակերպութիւնները կազմալուծել, Քորէական թերակղզիին վրայ խաղաղութեան քայլերու դիմել եւ առեւտրական բազմակողմանի բանակցութիւններ վերաշխուծացնելու համար ճիգ չիւնայել:

21 նախագահներն ու վարչապետները թայլանտի մէջ կայացած երկօրեայ վեհաժողովի արտոնի հա-

մաձայնած են նաեւ հաւաքական քանդումի վէտքերէ ձերբազատիլ:

Երկօրեայ բանակցութեան օրակարգի տիրական նիւթը «առաքելչութեան դէմ պատերազմը» եղած է, ինչպէս նաեւ Հիւսիս-

այսին Քորէայի ներկայացուցած սպառնալիքը:

Սակայն հակառակ ամերիկեան ճիգերուն՝ Հիւսիսային Քորէան պաշտօնապէս դատապարտելու համար, դեկտեմբերին փաստաթուղթը Հիւսիս-

այսին Քորէայի պալատին միացեալ կոչ չէ ընդգրկած, ո՛չ ալ հարցին գծով առանձին հաղորդագրութիւն մը՝ ինչպէս ձափոն առաջարկած էր: Միւս կողմէ, Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին երէկ

յայտնած է, որ Հիւսիսային Քորէա միջազգային որեւէ օրէնք չէ խախտած փորձարկելով կարճ հաստոյութեամբ հրթիռ մը, դիտել տալով, որ անհկա երկրին կորիզային ծրագիրին մաս չի կազմեր:

ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԽԱՉԸ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԻՇԵԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

# ԱՄԻՆԷ

Կը ներկայացնեն՝

## ՊԵՅՐՈՒԹԻ ՄԵՋ

Նոյեմբեր 18ին  
ԻԻՆԷՍՔՕ ի սրահին մէջ  
երեկոյեան 8:30-ին տոմսերը՝  
Trading Places 01 611600, CD-Theque Ashrafieh - ABC.  
Համազգայինի գրասենտը, Նարեկացի գրասենտը  
եւ Ազգային Դպրոցներէն

**BYBLOS BANK**

## ԻՐԱՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ ԽՈՍՏԱՑԱԻ ՄԱԿԻ ԿՈՐԻՉԱՅԻՆ...

Շարունակուած Ա. ԷջԵՃ

Հաղորդագրութեան համաձայն, «Իրանի կառավարութիւնը որոշած է ԷՆ. Փի. Թի.ի կապուած յաւելեալ փրոթոգոլը ստորագրել: Ասիկա առիթ պիտի տայ ՄԱԿի գործակալութեան անակնկալութիւն այցելել կասկածելի վայրեր:

Իրան նաեւ «որոշած է կամաւոր կերպով իւրանիոմի հարստացման եւ վերագործածութեան գործունէութիւնը առկախել», ընթացք տալով գործակալութեան բանալի մէկ այլ պահանջին:

Իրանի Ազգային Ապահովութեան Գերագոյն Խորհուրդի քարտուղար Հասան Ռաուհանի ըսած է, որ իրանցի պաշտօնատարներ թուական մը պիտի ճշդեն փրոթոգոլը կնքելու համար, սակայն ան պաշտօնացուցած է նաեւ, որ իրան իրեն կը վերապահէ իւրանիոմի հարստացման աշխատանքին վերսկսելու իրաւունքը՝ եթէ անհկա անհրաժեշտ նկատուի:

Փոխարէնը, Բրիտանիա, Ֆրանսա եւ Գերմանիա «կը ճանչնան իրանի իրաւունքը՝ կորիզային ուժանիւթը խաղաղ նպատակներու գործածելու համար»:

Անոնք խոստացած են, որ յաւելեալ փրոթոգոլը «որեւէ ձեւով չի նպատակադրեր Իրանի գերիշխանութիւնը, ազգային արժանապատուութիւնը կամ ազգային ապահովութիւնը» անտեսել:

Իրանցի պաշտօնատարներ ունին այն մտաւախութիւնը, թէ անակնկալ քննութիւններ կրնան ազգային գերիշխանութիւնը բռնաբարելու համապատասխանել:

Եթէ իրան լիովին գործադրէ իր խոստումները, Իսլամական Հանրապետութիւնը «կրնայ ակնկալել, որ աւելի դիրսար արդիական արեւտագիտութիւն եւ նիւթեր ձեռք պիտի ձգէ՝ շարք մը մարկերու մէջ»:

Երեք նախարարներուն իրան այցելութիւնը գազաբնակէտն էր երեք երկիրներուն կողմէ ամիսներու դիւանագիտական լայնածիր եւ գաղտնի ձեռքարկ:



Նախագահ Մոհամէտ Խաթեմի երէկ ողջունած է Ե. Միութեան Իրանի հետ տիպալիկ ձեռնարկելու ձեռքը, դիտել տալով, որ ասիկա ո՛չ միայն ցուցանիչ է անոնց փափաքին՝ Իրանի հետ յարաբերութիւններ հաստատելու, այլ նաեւ անոնց փափաքին՝ շրջանին մէջ խաղաղութեան եւ կայունութեան նպաստելու:

### ԻՐԱՆ ԿՍՏԱԸ Ե, ՈՐ ԻՍՐԱՅԷԼ ՊԻՏԻ ԳՅԱՐՉԱԿԻ

Միւս կողմէ, Իրան երէկ յայտնած է, որ մտահոգ չէ, թէ Իսրայէլ կրնայ իր կորիզային վայրերուն վրայ կանխարգիլող յարձակումներու ձեռնարկել, յայտնելով, որ նման յարձակումներ մեծ վնաս պիտի չպատճառեն:

Արտաքին գործոց նախարարութեան քանքեր Համիտ Ռիպա Ասեֆի ըսած է, թէ իր կարծիքով «նման սպառնալիքներ լուրջ չեն, նկատի ունենալով, որ Իսրայէլ կը գիտակցի, թէ կարելոք կեղծութիւնները եւ շէնքերը չեն, այլ՝ թէքնիք գիտութիւնը եւ գիտական նուաճումները»:

Գերմանական «Տէր Ծփիկըլը» թերթը Հոկտեմբեր 13ի իր թիւին մէջ ըսած է, որ Իսրայէլեան Մոսատի մասնաշաղկունի մէկ միւտրը 2 ամիս առաջ հրահանգներ ստացած է Իրանի մէջ հարուածելու 5-6 թիրախներ, որոնց շուրջ կան կասկածներ, թէ կորիզային վէտքերու պատրաստութեան համար կ'օգտագործուին:

(ԱՅՓ)